

Ուսանողական հետազոտություն

- Արցախյան հիմնախնդիրը ծագումից մինչև մեր օրեր:

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հեռանկարներն ու անկախ պետականության անհրաժեշտությունը





Արա Սարգսյան

Արցախի պետական համալսարան,
Իրավագիտություն, 3-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս
Արմեն Ասրյան

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԾԱԳՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐ: ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունն իրականացվել է «Քաղաքացիական հար» հասարակական կազմակերպության և Արցախի պետական համալսարանի համագործակցության արդյունքում՝ ուսանողական հետազոտական աշխատանքների դրամաշնորհի շրջանակում:

Ամփոփագիր

Ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է, որն իր ամրագրումն է ստացել նաև ՄԱԿ Կանոնադրության մեջ: Ինքնորոշման գաղափարը լայն տարածում է գտել գաղութային և կախյալ երկրներում ազգային-ազատագրական շարժումների ժամանակ՝ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Արցախյան հիմնախնդիրն էլ, որ երկար տարիներ մնում է չլուծված, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի արտահայտությունն է: Սույն հետազոտությունը արցախյան հիմնախնդրի վերաբերյալ է, մասնավորապես՝ արցախյան հակամարտության պատմական, քաղաքական ու իրավական գործընթացների մասին, որոնք տեղի են ունեցել հակամարտության ծագումից ի վեր՝ մինչ օրս, դրանց լրիվ, համակողմանի և օբյեկտիվ վերլուծության միջոցով, ինչպես նաև Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման, դրա իրավական հիմքերի ու իրավական երաշխիքների մասին: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է նաև հակամարտության վերջին էսկալացիայի՝ 44-օրյա պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ներկայումս ստեղծված բարդ իրադրության պայմաններում իրավական խնդիրների լուծման հեռանկարները: Հակամարտության փաստական հանգամանքների խորը ուսումնասիրություն է կատարվել՝ դրանք համադրելով միջազգային իրավունքի նորմերին, ինչպես նաև ուսումնասիրվել են մյուս հակամարտություններն ու զուգահեռներ են անցկացվել արցախյան հակամարտության հետ: Ներկայացվել են Ադրբեյջանի կողմից առաջ քաշվող փաստարկները և բերվել դրանց հակափաստարկները: Հաստատվել է այն հանգամանքը, որ Արցախի ինքնորոշման իրավունքի իրացումը անհնար է առանց անկախ պետականության: Աշխատանքի շրջանակներում արցախյան հակամարտության իրավական լուծման մեխանիզմ ու տարբերակ է առաջարկվել՝ հիմնվելով կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների վրա:

Ներածություն

Այսօր էլ աշխարհի տարբեր հատվածներում առկա են բազմաթիվ և տարաբնույթ հակամարտություններ: Այդ հակամարտություններից է ադրբեյջանա-դարաբաղյան կոնֆլիկտը, որն ունի խորը արմատներ: 1917թ.-ին Ռուսաստանի կայսրության փլուզումից հետո նորաստեղծ Ադրբեյջանը տարածքային հավակնություններ ներկայացրեց բնիկ հայերով բնակեցված մի շարք շրջանների նկատմամբ, որոնց մեջ էր նաև Արցախը (Լեռնային Ղարաբաղ):

Հակամարտությունն ունի մի քանի առանձնահատկություններ: Նախ այն գոյություն ունի երկար տարիներ՝ հարյուր տարուց ավելի: Հակամարտությունը տեղի է ունենում Անդրկովկասում՝ մի տարածաշրջանում, որտեղ բախվում են գերտերությունների աշխարհաքաղաքական շահերը: Բացի այդ՝ հակամարտության կողմերը տարբեր կրոնի ազգեր են: Հակամարտությունն էթնիկ է, որը ժամանակի ընթացքում վերածվել է միջպետական հակամարտության: Գաղտնիք չէ, որ բնիկ հայ բնակչությանը իր պատմական տարածքներից դուրս մղելը Թուրքիայի օրակարգում միշտ եղել է ու կա՝ Մեծ Թուրանի քաղաքական նպատակին հասնելու համար: Հետևաբար հակամարտությանը ոչ անմիջականորեն ընդգրկված է նաև Թուրքիան, որը փորձում է հարցը լուծել հենց Ադրբեյջանի միջոցով: Սակայն պետք է ընդգծենք, որ վերջին տարիներին Թուրքիան դա անում է անթաքույց:

Խորհրդային տարիներին Արցախը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանի Չանրապետությանը, իսկ հետագայում նրան տրվեց ինքնավարություն՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում՝ որպես ինքնավար մարզ: Խորհրդային շրջանից մինչև 1988թ.-ը ԼՂԻՄ-ում և Ադրբեջանի մի շարք բնակավայրերում հայերի նկատմամբ կիրառվում էին բռնաճնշումներ: 1988թ.-ին արցախահայությունը ոտքի կանգնեց Չայաստանին վերամիավորվելու պահանջով, որին Ադրբեջանը պատասխանեց Սումգայիթի, Բաքվի, Մարաղայի, Կիրովաբադի ջարդերով: Ադրբեջանական իշխանություններն ամեն կերպ փորձում էին ճնշել շարժումը, կազմակերպում էին ջարդեր, բռնություն էին գործադրում հայ ազգաբնակչության նկատմամբ: Ադրբեջանի կողմից հակամարտությունը սրվեց: Արդյունքում արցախահայության դեմ սկսվեց լայնածավալ պատերազմ, որն ավարտվեց հայկական կողմի հաղթանակով: Այդ ընթացքում Լեռնային Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը՝ հիմնվելով ազգերի ինքնորոշման իրավունքի վրա: Պատերազմի ավարտից ի վեր Ադրբեջանի կողմից եղել են բազմաթիվ սադրանքներ ու հարձակումներ՝ նեոարյալ սահմանային միջադեպեր, ապրիլյան քառօրյա պատերազմ և 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված լայնածավալ պատերազմը, որոնք ուղեկցվեցին պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններով: Արցախյան առաջին պատերազմի ավարտից հետո ընթանում են բանակցություններ՝ ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման համար, որոնք չեն հասել իրենց վերջնական նպատակին: Վերջին պատերազմից հետո առաջ են եկել նոր իրողություններ, և Ադրբեջանը ԼՂ հարցի կարգավորումը համարելով ավարտված: Սակայն պետք է նշենք, որ հիմնախնդիրը դեռևս կարգավորված չէ: Սրա մասին բազմիցս հայտարարել են ԵԱՀԿ Մինսկի համանախագահության երկրները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, ինչպես նաև այլ երկրներ՝ ընդգծելով հակամարտության խաղաղ, բանակցությունների միջոցով լուծման անհրաժեշտությունը ու կարևորությունը:

Անհրաժեշտ է համակողմանի ուսումնասիրել ու վերլուծել արցախյան հիմնախնդրի պատմական, քաղաքական ու իրավական ասպեկտները, բանակցային գործընթացը, ինչպես նաև ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքում՝ այն համապարփակ պատկերացնելու և դրա եռությունը հասկանալու համար: Արցախի ժողովուրդը իրացրել է իր ինքնորոշման իրավունքը, և այն պետք է հարգվի: Այս համատեքստում պետք է պարզել՝ արդյոք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը հնարավոր է առանց անջատման ու անկախ պետականության, և ինչպես հասնել հակամարտության վերջնական լուծմանը:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից ու եզրակացությունից: Առաջին գլխում ներկայացված են արցախյան հակամարտության պատմությունը, պատմական, քաղաքական ասպեկտներն ու հիմնախնդրի շուրջ ծավալված բանակցային գործընթացի պատմությունը: Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվել ինքնորոշման իրավունքի ընկալմանը միջազգային իրավունքում, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը, անկախ պետականություն ունենալու անհրաժեշտությանը:

1. Արցախյան հիմնախնդրի պատմաքաղաքական ակնարկ

1.1. Արցախյան հակամարտության պատմությունը

Լեռնային Ղարաբաղը (Արցախ)՝ որպես պատմական Հայաստանի մաս, հիշատակվում է դեռևս հույն պատմիչ Ստրաբոնի կողմից¹, ըստ որի այն Մեծ Հայքի նահանգներից մեկն էր: Արցախի պատկանելությունը Հայաստանին հաստատում են նաև այլ անտիկ հեղինակներ՝ Պլինիոս Ավագը, Դիոն Կասիոսը և այլք²: Նրանց պնդմամբ Հայաստանի արևելյան սահմանն անցել է Զուռ գետով:

Արցախյան հակամարտությունը պայմանականորեն պետք է բաժանել երեք մասերի՝ հակամարտության ծագումից մինչև խորհրդային կարգերի հաստատում (1918-1920թթ.), ԽՍՀՄ ստեղծումից մինչև դրա փլուզումը և հետխորհրդային շրջանում:

Ըստ Ալեքսանդր Մանասյանի կարևոր ու Էական հանգամանք է այն, որ արցախահայությունը 20-րդ դարում երկու անգամ ինքնորոշվել է որևէ մեկին չպատկանող տարածքներում՝ դրանց կարգավիճակի մասին միջազգային իրավական հիմքերի բացակայության պայմաններում³: Առաջին անգամ դա տեղի է ունեցել 1918թ.⁴, երբ արցախահայության լիազոր ներկայացուցիչների (ԱԼՆ) համագումարները մերժել են մոլսավաթական Ադրբեջանին ենթարկվելու՝ երկրամասին թուրքերի ներկայացրած պահանջը և հռչակել Հայաստանի Հանրապետության մաս կազմելու արցախահայության վճռականությունը: Երբ Ադրբեջանը դիմեց Ազգերի Լիգա⁵ Լեռնային Ղարաբաղը ճանաչվեց որպես վիճելի տարածք Հայաստանի և Ադրբեջանի միջև: 1920թ. օգոստոսի 10-ին Խարհրդային Ռուսաստանը և Հայաստանը նախաստորագրեցին համաձայնագիր, ըստ որի Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Չանգեզուրը ճանաչեց վիճելի տարածքներ: Հաջորդիվ Բաքուն 1920թ. նոյեմբերի 30-ին վերոնշյալ տարածքները ճանաչեց Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս⁶: Դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի նիստում նորից հրապարակվեց այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Չանգեզուրը Հայաստանի անբաժանելի մասն են, սակայն հաջորդ օրը մամուլում հրապարակվեց այդ Հռչակագրի փոփոխված տարբերակը: Ըստ դրա Նախիջևանը և Չանգեզուրը հռչակվեցին Հայաստանի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ դիրքորոշումը փոխվեց: Հռչակվեց, որ *խորհրդային Ադրբեջանը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու լրիվ ինքնորոշման իրավունքը*⁷: Հետագայում 1921թ. հունիսի 3-ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն Խորհրդային Հայաստանի կառավարությանը հանձնարարվում է Հռչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին»⁸: Ի կատարումն Կովկասյան բյուրոյի որոշման՝ ՀՍԽՉ ժողկոմխորհը 1921թ. հունիսի 12-ին ընդունեց համապատասխան հայտարարություն, այն է՝ «*Ադրբեջանի ՍխՉ հեղկոմի հռչակագրի և Հայաստանի ու Ադրբեջանի ՍխՉ-ների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմվանից*

¹ Ստրաբոն, Աշխարհագրություն, 11,14,1,

<http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus%3Atext%3A1999.01.0198%3Abook%3D11%3Achapter%3D14%3Asection%3D1>

² Dion Cassius, «Roman History», <https://ryanfb.github.io/loebolus-data/L177.pdf>

³ Ալեքսանդր Մանասյան, Արցախյան հիմնախնդիր: Նորովի իմաստավորման ենթակա հարցեր, 2019թ.

⁴ Արցախահայության լիազոր ներկայացուցիչների (ԱԼՆ) առաջին համագումարը տեղի է ունեցել 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում

⁵ Решение Пятого комитета Ассамблеи Лиги Наций от 20.11.1920 об отклонении просьбы Азербайджана о приеме в Лигу Наций в связи с наличием у него территориальных споров (League of Nations. The Records of the First Assembly. Meetings of the Committees II. Geneva, 1920, p.173–174)

⁶ «Վոմունիստ», Երևան, 1920 թ. դեկտեմբերի 7

⁷ «Коммунист» (Баку), 2 декабря, 1920

⁸ Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1992, с. 633

կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մաս»⁹:

Ինչպես տեսնում ենք՝ դեռևս խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ ժողովուրդը իրացրել էր իր ինքնորոշման իրավունքը: Փաստն այն է, որ Ազգերի Լիգան, ինչպես նաև ԽՍՀՄ-ը չեն ճանաչել Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Չանգեզուրը Ադրբեջանի մաս: Ավելին՝ Ադրբեջանն է ճանաչել դրանք որպես Հայաստանի անկախության մաս: Ճիշտ է, հետագայում ԼՂ հարցում փոխեց իր դիրքորոշումը, սակայն ճանաչեց այնտեղի բնակչության ինքնորոշման իրավունքը: Սակայն հետագայում՝ 1921թ. հուլիսի 4-ին, Բաքվի պահանջով Կովկասյան բյուրոյի անդամները լսեցին արդեն իսկ լուծված Լեռնային Ղարաբաղի հարցը և այն վճռեցին հոգուտ Հայաստանի, սակայն պահանջվեց Կենտրոնի ճնշումը, որը իրագործեց Ստալինը: Հուլիսի 5-ին այդպիսի հարցերի իրավասությունը չունեցող երրորդ երկրի կուսակցական մարմինը՝ այն էլ առանց քննարկման ու քվեարկության որոշեց՝ ողջ Լեռնային Ղարաբաղը (ոչ թե միայն ԼՂԻՄ-ի տարածքը) թողնել խորհրդային Ադրբեջանի կազմում՝ լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով¹⁰: Ակնհայտ է, որ ԽՍՀՄ-ն նման պետության համար ներքին հակամարտությունների, բախումների ու կոնֆլիկտների առկայությունը միայն վնաս կհասցներ պետությանը և կարող էր ներքին ճգնաժամի առջև կանգնեցնել, այդ իսկ պատճառով հայերին ու ադրբեջանցիներին հաշտեցնելը խորհրդային Միության համար անհրաժեշտություն էր: Սրանից զատ Ադրբեջանը խորհրդային տարիներին ամեն ինչ անում էր՝ Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության թվաքանակի նվազեցման համար՝ դիմելով տարբեր միջոցների ու մեթոդների¹¹: Ադրբեջանական նման քաղաքականությունը նպատակ ուներ հայաթափման միջոցով լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը հոգուտ իրեն:

Վերակառուցման ժամանակաշրջանում արցախահայության մոտ արթնացավ Հայաստանին վերամիավորվելու գաղափարը, և ԼՂԻՄ-ում սկիզբ առավ Ղարաբաղյան շարժումը: 1987թ.-ին ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանին վերամիավորվելու պահանջով ստորագրահավաքին մասնակցեց մարզի ավելի քան 80 հազար բնակիչ: Կենտրոնից Ադրբեջանին հրահանգում էին ոչինչ չձեռնարկել ու չմիջամտել: Մինչ այդ նման ստորագրահավաքները կազմակերպվում էին գաղտնի, սակայն ադրբեջանական իշխանությունները հաշվեհարդար էին տեսնում կազմակերպիչների հետ¹²: Արդեն 1988թ. փետրվարին սկիզբ առավ շարժումը՝ մայր Հայաստանին վերամիավորվելու պահանջով, սակայն դրան ի պատասխան արցախահայության նկատմամբ սկսվեցին բռնաճնշումներ ու ջարդեր՝ Սոլմզայիթում, Բաքվում և խորհրդային Ադրբեջանի այլ տարածքներում: Դրանով Ադրբեջանը նպատակ ուներ ճնշել շարժումը:

1990թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը¹³, որը կարգավորում է ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու գործընթացը: Ըստ այս օրենքի ԼՂԻՄ-ը ևս կարող էր դուրս գալ ԽՍՀՄ կազմից, քանի որ ինքնավար կազմավորումներին ևս վերապահված էր այդ իրավունքը: ԽՍՀՄ 1989թ. հունվարի 12-ի հրամանագրով ԼՂԻՄ-ում ժամանակավորապես մտցվեց

⁹ «Խորհրդային Հայաստան», Երևան, 1920 թ. հունիսի 19, «Բակինսկի ռաբոչի» Բաքու, հունիսի 22

¹⁰ «Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов, Ереван», 1992г. Стр. 649-650, документы N 450, 451

¹¹ Ալեքսանդր Մանասյան, Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել..., Երևան 2011թ., էջ 65-67

¹² «Азербайджан и Россия: общества и государства.» Москва 2001г.

¹³ Закон СССР от 3 апреля 1990 г. № 1409-1 «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР»

կառավարման հատուկ ձև: Ըստ հրամանագրի՝ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները դադարեցվում էին՝ մինչև Խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը: Նրա լիազորություններն ամբողջ ծավալով փոխանցվում էին նոր կազմավորված ԼՂԻՄ Յատուկ կառավարման կոմիտեին(ՅԿԿ), որն անմիջականորեն ենթարկվում էր ԽՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին: Փաստորեն, դեֆակտո ԼՂ-ը դուրս բերվեց Խորհրդային Ադրբեջանի իրավազորությունից: Առանցքային էր նաև ՅԿԿ-ի ու Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ որոշումը վերամիավորման մասին, որն ընդունվել էր 1989թ. դեկտեմբերի 1-ին¹⁴: Կենտրոնից բացասական արձագանքը չուշացավ, սակայն այս որոշմամբ Յայաստանն ու Լեռնային Ղարաբաղը իրենց միասնական ու հստակ դիրքորոշումն արտահայտեցին: Իրավական առումով այս որոշումը նույնպես կասկածներ չի հարուցում, քանի որ և՛ Յայաստանը, և՛ Լեռնային Ղարաբաղը ինքնորոշման իրավունքի սուբյեկտ էին ճանաչվել¹⁵ ԽՍՀՄ կազմավորման գործընթացների ժամանակ:

Հարկ է անդրադառնալ Ադրբեջանի կողմից ԽՍՀՄ իրավահաջորդությունից հրաժարվելուն և մուսավաթական Ադրբեջանի իրավահաջորդությունը ընդունելուն: Այս փաստը Եական նշանակություն ունի հիմնախնդրի կարգավորման գործընթացի համար: Ադրբեջանը 1991թ. օգոստոսին որոշեց հրաժարվել ԽՍՀՄ իրավահաջորդությունից: Հոկտեմբերի 18-ին Ադրբեջանի Գերագույն Խորհուրդն ընդունեց «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտը¹⁶, որը ԽՍՀՄ կազմից դուրս գալու իրավական դրսևորումն էր: Սրանով դիտվում էր Ռուսաստանի կողմից Ադրբեջանի բռնազավթում, և փաստորեն այս ակտը ապօրինի և ուժը կորցրած է ճանաչում Ադրբեջանի վերաբերյալ բոլոր ակտերը և սահմանադրորեն հայտարարում է, որ Ադրբեջանը գոյատևել է 1918-1920թթ.-ը: Փաստացի հաստատվեց, որ Ադրբեջանը միջազգային հանրության կողմից դե-յուրե չճանաչված և առանց սահմանների Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ էր: Հետևաբար վերոնշյալ ակտը անվավեր ճանաչեց նաև ԽՍՀՄ այն որոշումը, ըստ որի ԼՂԻՄ-ը լայն ինքնավարությամբ պետք է մնար Ադրբեջանի կազմում: Այսքանից կարելի է եզրակացնել՝

1. Ադրբեջանը հրաժարվում է Ադրբեջանի ԽՍՀ իրավահաջորդությունից՝ կորցնելով Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր հավականության հիմքը, այսինքն Ադրբեջանը անկախացել է առանց Լեռնային Ղարաբաղի՝ իր կազմում լինելու,
2. Նա նաև հրաժարվում է 1921թ. Կարսի պայմանագրով Նախիջևանի նկատմամբ իր իրավազորությունից,
3. Ադրբեջանի ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելով՝ նրանք կարծում էին, որ կխուսափեն ԼՂ-ի կողմից ԽՍՀՄ 1990թ. ապրիլի 3-ի օրենքով նախատեսված իրավունքից, սակայն Լեռնային Ղարաբաղը արդեն իսկ հանդիսանում էր ինքնորոշվող սուբյեկտ՝ համաձայն վերոնշյալ օրենքի:

Մինչև Ադրբեջանի կողմից վերոնշյալ ակտի ընդունումը՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների ժողովուրդների ժողովրդական պատգամավորների մասնակցությամբ տեղի ունեցած

¹⁴ «Խորհրդային Հայաստան», 3 դեկտեմբեր, 1989թ.

¹⁵ Ю.Г.Бадерев, Народ Нагорного Карабаха-субъект права на самоопределение, М., 1993г.

¹⁶ Конституционный Акт Азербайджанской Республики от 18 октября 1991 года №222-ХІІ, О восстановлении государственной независимости Азербайджанской Республики

նստաշրջանն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության հռչակման մասին» հռչակագիրը¹⁷:

Անկախությանն հռչակմանն ի պատասխան սկսվեցին ինտենսիվ մարտեր, որոնք ընթացան մինչև 1994թ. մայիսի 12-ը՝ հայկական կողմի հաղթանակով: Բիշքեքում Ադրբեջանի և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին համաձայնագիր կնքվեց¹⁸, որի տակ նաև ստորագրեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը՝ ի դեմս Պաշտպանության նախարարի:

Հարկ է նշել, որ ՄԱԿ ԳԱ 1974թ. 3314 բանաձևը¹⁹ վերահաստատում է պետությունների պարտավորությունը՝ զինված ուժ չկիրառելու ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից զրկելու նպատակով, որը Ադրբեջանը բազմիցս խախտեց: Բանաձևի մեջ պետության չճանաչված լինելու կամ ՄԱԿ-ի անդամ լինելու հանգամանքը չի շեշտվում, որից էլ կարող ենք եզրակացնել, որ այն կիրառելի է նաև Արցախի պարագայում:

1.2. Արցախյան հիմնախնդրի բանակցային գործընթացի պատմությունը

Հրադադարի մասին համաձայնությունից ի վեր Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը՝ որպես միջազգայնորեն չճանաչված պետություն, շարունակեց գոյություն ունենալ և զարգանալ: Սկիզբ առավ բանակցային գործընթացը, որի ընթացքում Հայաստանի (սկզբնական շրջանում նաև Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ներկայացուցիչների) և Ադրբեջանի միջև ընթանում էին բանակցություններ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի ներքո²⁰: Անհրաժեշտ է առանձնացնել Ադրբեջանի ու Հայաստանի իրավաքաղաքական փաստարկները, որոնք վերջիններս դրել են ԼՂ հիմնահարցի կարգավորման հիմքում: Ադրբեջանը պնդում է, որ որպես անկախ պետություն ՄԱԿ-ի կողմից ճանաչվել է նախկին ԱդրեսՍՅ սահմաններում, և հակամարտության կարգավորման համար պետք է կիրառվի տարածքային ամբողջականության սկզբունքը: Ադրբեջանը հայտարարում էր, որ պատրաստ է ԼՂ-ին տալու ամենաբարձր կարգի ինքնավարություն: ԼՂ ճանաչումը կարող է վտանգավոր լինել անջատողականության արդարացման՝ այլ երկրների համար, որոնք ունեն նույնանման խնդիրներ²¹: Հայաստանի փաստարկն այն է, որ ԼՂ-ը ո՛չ դե յուրե, ո՛չ դե ֆակտո երբևիցե մաս չի կազմել անկախ Ադրբեջան պետությանը: Բացի այդ Բաքուն թաքցրել էր այն փաստը, որ հրաժարվել է Ադրբեջանի ԽՍՀ իրավահաջորդությունից և չէր կարող ճանաչվել այդ սահմաններով: Այսպիսով, ՄԱԿ-ին անդամակցելու պահին ԼՂ-ի նկատմամբ Բաքվի հավակնությունները անհիմն ու անօրինական էին: Լեռնային Ղարաբաղն իր անկախությունը հռչակել է Ադրբեջանին չպատկանող տարածքներում: Անգամ ԱդրեսՍՅ-ն իրավահաջորդ լինելու պարագայում միևնույն է Ադրբեջանը որևէ հավակնություն չի կարող ունենալ, քանի որ ԼՂԻՄ-ում 1989թ. ԽՍՀՄ-ն կողմից մտցվել էր հատուկ կառավարում՝ դուրս բերելով Ադրբեջանի կազմից: Արցախահայության

¹⁷ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 3 սեպտեմբերի 1991թ.

¹⁸ Ю.Г. Барцеров, Нагорный Карабах в международном праве и мировой политике, Москва 2008г., док. N 776, стр. 745-746

¹⁹ Definition of Aggression, United Nations General Assembly Resolution 3314 (XXIX), <http://hrlibrary.umn.edu/instreet/GAres3314.html>

²⁰ Ю.Г. Барцеров, Нагорный Карабах в международном праве и мировой политике, Москва 2008г., док. N 777 Принят на Будапештском саммите ОБСЕ. Архив МИД НКР, папка № 9, ОБСЕ 1994 г., стр. 745-746

²¹ Ալեքսանդր Մանասյան, Ղարաբաղյան հիմնախնդիր (Փաստարկներ և փաստաթղթեր), 2005թ., էջ 7

նկատմամբ իրականացվող հայաստանյալ քաղաքականությունը ևս հայկական կողմի փաստարկների շարքում է:

Բանակցային գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու ձևով՝ ըստ Հայաստանի ղեկավարների կառավարման ժամանակահատվածի և ըստ առաջարկվող կարգավորման փաթեթների: Փորձենք ուսումնասիրել բանակցային գործընթացը ըստ առաջարկվող կարգավորման տարբերակների և վերլուծել դրանք:

1996թ. դեկտեմբերին Լիսաբոնում կայացավ ԵԱՀԿ գագաթնաժողովը, որին մասնակցում էին 50-ից ավելի երկիր, այդ թվում՝ Ադրբեջանն ու Հայաստանը: Ընդունվելիք հռչակագրի 20-րդ կետը պետք է վերաբերեր Լեռնային Ղարաբաղին, սակայն Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնության չեկան: Եվ՝ ԵԱՀԿ գործող համանախագահը, և՛ Ադրբեջանի նախագահը պնդում էին, որ այն պետք է ներառի Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերաբերյալ դրույթը²², սակայն Հայաստանը դեմ էր և պնդեց, որ Ադրբեջանը չի կարող ապահովել անվտանգության երաշխիքներ ԼՂ բնակչության համար: Նոր ողբերգության կանխման միակ տարբերակը Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է²³: Լիսաբոնի գագաթնաժողովի հռչակագրի բովանդակությունից պարզ է դառնում, որ ԼՂ-ի համար առաջարկվում էր՝ լինի Ադրբեջանի կազմում նախկին ԼՂԻՄ-ի սահմաններում լայն ինքնավարությամբ: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակը պետք է լուծվեր Ադրբեջանի տարածքային ամբողջականության սահմաններում: Լևոն Տեր-Պետրոսյանը իր հողվածում անդրադարձել է հենց այս դրվագին և նշել, որ Ղարաբաղի հակառակորդը Ադրբեջանը չէ, որին կարելի է հեշտությամբ ծնկի բերել: Իրականում Ղարաբաղի հակառակորդը *միջազգային հանրությունն է*, որին մենք, փաստորեն, ձեռնոց ենք նետել: Չհասկանալ այս պարզ իրողությունը, կնշանակի մեր ժողովրդին մատնել դաժան փորձությունների²⁴: Ըստ ՀՀ առաջին նախագահի, մինչև վերջին պահը Լիսաբոնյան հռչակագրում Արցախի վերաբերյալ չեզոք դիրքորոշում էր, սակայն վերջին պահին անակնկալ կերպով դա փոխվեց: Բացի այդ Ադրբեջանի և Հայաստանի միջև ուժերի հարաբերակցությունը փոխվեց՝ հոգուտ Ադրբեջանի, երբ ստեղծվեց նավթի միջազգային կոնսորցիումը Ադրբեջանում²⁵: Հայաստանը վետո կիրառեց Լիսաբոնյան հռչակագրի վրա:

Լևոն Տեր-Պետրոսյանն իր «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հողվածում ձևակերպել էր որոշ կետեր²⁶, որոնք, իր կարծիքով, հայեցակարգային նշանակություն ունեն խնդրի կարգավորման համար: Ըստ նրա՝

1. պատերազմը պետք է բացառվի, Ղարաբաղի հարցը պետք է լուծվի *միայնումիայն խաղաղ բանակցությունների միջոցով*,
2. ստատուս-քվոն երկար ժամանակով պահպանել հնարավոր չէ, որովհետև դա թույլ չեն տա ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողությունները,
3. Ղարաբաղին և Հայաստանին ձեռնտու չէ հարցի չկարգավորված վիճակը, որովհետև դա զգալիորեն խոչընդոտում է Հայաստանի, հետևաբար նաև

²² Лисабонский документ ОБСЕ 1996 года, <https://www.osce.org/files/f/documents/2/4/39543.pdf>

²³ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի ելույթը 1996թ. ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնաժողովում, <https://www.youtube.com/watch?v=PjK1Duh2N9o>

²⁴ Պատերազմ, թե՞ խաղաղություն. Լրջանալու պահը, 1997թ., էջ 7

²⁵ ՀՀ առաջին նախագահի հարցազրույցը Հ1 ալիքին, 2021թ. Մայիսի 27, <https://www.youtube.com/watch?v=6U72YbbqSxo>

²⁶ Պատերազմ, թե՞ խաղաղություն. Լրջանալու պահը, 1997թ., <https://www.lin.am/2650577.html>

Ղարաբաղի տնտեսական զարգացմանը, բարդություններ ստեղծում միջազգային հանրության և մանավանդ հարևան երկրների հետ հարաբերություններում, որոնք կարող են ճակատագրական նշանակություն ունենալ,

4. Ղարաբաղի հարցի լուծման *միակ տարբերակը փոխզիջումն է*, որը նշանակում է ոչ թե մի կողմի հաղթանակ և մյուսի պարտություն, այլ հակամարտության հազեցման վիճակում ձեռքբերված հնարավոր համաձայնություն:

Փաթեթային տարբերակ: Փաթեթային տարբերակը ընդգրկում էր 2 համաձայնագիր՝ *զինված հակամարտության դադարեցում և կարգավիճակի* հարց: Ընդ որում, կարգավիճակի հարցը երկրորդ պլան էր մղվում: Համաձայն այս տարբերակի առաջին համաձայնագրի²⁷ հայկական զինված ուժերը պետք է դուրս բերվեին Ղարաբաղի հարակից շրջաններից, ԵԱՀԿ խաղաղապահներ տեղակայվեին, բուֆերային գոտի ստեղծվեր, Լաչինը վարձակալությամբ տրամադրվեր ԵԱՀԿ-ին, Շուշիի ադրբեջանցի և Շահումյանի հայ փախստականների վերադարձ կատարվեր: Հատկանշական է նաև այն փաստը, որ այս բոլոր համաձայնությունների կատարման երաշխավորը պետք է լիներ ՄԱԿ Անվտանգության խորհուրդը: Իսկ ըստ երկրորդ համաձայնագրի՝

1. կողմերը պետք է ճանաչեին Ադրբեջանի ու Հայաստանի տարածքային ամբողջականությունը և սահմանների անխախտելիությունը,
2. Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում էր Ադրբեջանի կազմում, իսկ ինքնորոշումը պետք է ձևակերպվեր Ադրբեջանի ու Ղարաբաղի իշխանությունների միջև կնքված համաձայնագրով, որը հավանության կարժանանա ԵԱՀԿ Մինսկի համաժողովի կողմից ու կներառվեր Ադրբեջանի ու ԼՂ-ի սահմանադրություններում,
3. Լեռնային Ղարաբաղը կունենար իր սահմանադրությունը, դրոշմ, զինանշանը, հիմնը, ոստիկանությունը, ազգային գվարդիան ու ընտրված իշխանությունները,
4. Ադրբեջանի օրենսդրությունը ԼՂ-ում կգործի այն ժամանակ, եթե չհակասի վերջինիս օրենքներին, իսկ ադրբեջանական բանակն ու ոստիկանությունը կարող էր մտնել ԼՂ՝ միայն տեղի իշխանությունների թույլտվությամբ,
5. ԼՂ քաղաքացիները պետք է ունենային ադրբեջանական անձնագրեր՝ ԼՂ հատուկ հավելագրումով, բայց չէին համարվի օտարերկրացիներ նաև Հայաստանում:

Արցախյան հիմնախնդրի կարգավորման այս տարբերակին կողմ էր Ադրբեջանը, սակայն կտրականապես դեմ արտահայտվեց Արցախը²⁸: Իհարկե, կարգավորման այս տարբերակը իրապես արցախահայության շահերից չէր բխում, և կարգավիճակ, որով Արցախը կլիներ Ադրբեջանի կազմում՝ հղի է բազմաթիվ վտանգներով:

Փուլային տարբերակ: Փաթեթային տարբերակի մերժումից հետո ԵԱՀԿ համանախագահությունը ներկայացրեց կարգավորման մեկ այլ փաթեթ: Սրա եռությունը կայանում էր նրանում, որ հարցը լուծվեր փուլ առ փուլ, իսկ կարգավիճակի հարցը մղվեր հետին պլան՝ ապագայում լուծելու նպատակով: Ըստ այս տարբերակի նախատեսվում

²⁷ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահություն, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագրի նախագիծ, 1997թ. Հուլիս, https://docs.rferl.org/Infographics/2019/2019_04/2019_04_Armenian_Timeline/images/PDF/Package_solution1997.pdf

²⁸ **Татул Акопян**, Этапы карабахского конфликта в 1990-х и какими были попытки решения, Ереван 2016, <https://jam-news.net/ru/%D0%BC%D0%B8%D1%80%D0%B0-%D0%BD%D0%B5-%D0%B1%D1%83%D0%B4%D0%B5%D1%82-%D0%B2%D0%BE%D0%B9%D0%BD%D0%B0/>

Եր²⁹ հայկական գործերը դուրս բերել ԼՂ-ի հարակից շրջաններից՝ բացառությամբ Լաչինից, բուժֆերային ու բաժանարար գոտիներ ստեղծել, միջազգային խաղաղապահներ տեղակայել ԼՂ-ում: Նախատեսվում էր տեղահանվածների վերադարձը, ինչպես նաև ապաշրջափակումն ու կոմունիկացիաների վերականգնումը: Ընդհանուր առմամբ այս տարբերակին կողմ էին Ադրբեջանն ու Հայաստանը, իհարկե, որոշ վերապահումներով, և ընդունում էին այն որպես հիմք՝ հետագա բանակցությունների համար, սակայն Արցախը դեմ էր (ԼՂ-ը այս փուլում դեռ բանակցության կողմ էր): Հայաստանը ուներ որոշ նկատառումներ, ըստ դրանց կարգավարման այս տարբերակում պետք է ներառվեր հետևյալ կետը՝ «ԵԱՀԿ, ՄԱԿ, ԱՊՅ, ԵՄ և համանախագահող պետությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ը, կստորագրեն համաձայնագիրը և հետամուտ կլինեն նրա լիակատար իրականացմանը, ինչպես նաև հանձնառություններ կստանձնեն կանխելու և հակազդելու համաձայնագրի դրույթների լուրջ խախտումներին»: Համաձայնագիրը ուժի մեջ պետք է մտներ կողմերից յուրաքանչյուրի սահմանադրորեն նախատեսված ընթացակարգով անցնելուց հետո: Հայաստանը այնդուրս էր, որ մի կետով պետք է հստակորեն և աներկբայորեն նախատեսվեր Հայաստանի դերը ԼՂ անվտանգության երաշխավորման հարցում: Այս նկատառումները հիմնականում միտված էին ստեղծելու երաշխիքներ համաձայնագրի դրույթներն անշեղորեն կատարման համար:

Մեր կարծիքով վերը քննարկված երկու տարբերակներից փաթեթայինը անընդունելի էր թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի համար: Սա հիմնավորում ենք նրանով, որ Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեջանի կազմում **անընդունելի է**: Սակայն պետք է նշենք, որ փուլային տարբերակը բարենպաստ էր այն առումով, որ Արցախը չէր ներառում Ադրբեջանի կազմում, և կարգավիճակի հարցը թողնում էր ապագային: Մյուս կողմից չենք կարող հստակ ասել, որ Ադրբեջանը կգնար այդ զիջմանը և կիրառվեր Արցախից: Ադրբեջանի կազմում տեղահանվելու, հայաթափվելու ու ցեղասպանվելու վտանգը դամոկլյան սրի պես կախված կլինի արցախահայության գլխին:

Ընդհանուր պետություն: 1998թ. նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի համանախագահությունը ներկայացրեց կարգավորման հաջորդ տարբերակը, որը ենթադրում էր՝ *Արցախը և Ադրբեջանը պետք է կազմեն մեկ ընդհանուր պետություն*: Ի տարբերություն փաթեթային տարբերակի՝ կարգավորման այս տարբերակում³⁰ նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղը հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում է և Ադրբեջանի հետ միասին կազմում է ընդհանուր պետություն՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Լեռնային Ղարաբաղը ունենալու էր իր Սահմանադրությունը, կառավարման մարմինները, դրոշը. զինանշանը ու օրհներգը, պաշտոնական լեզուն հայերենը կլիներ, իսկ երկրորդը՝ ադրբեջաներենը: Լեռնային Ղարաբաղը կմասնակցի Ադրբեջանի արտաքին քաղաքականությանը՝ միայն իր շահերի շրջանակներում: Աշխարհի հետ ուղիղ կապ Լեռնային Ղարաբաղը կարող էր միայն պահել մշակույթի, սպորտի, գիտության ու առևտրի բնագավառներում: Լեռնային Ղարաբաղը ունենալու էր կամավորության սկզբունքով ձևավորված անվտանգության և ոստիկանական ուժեր, որոնք կգործեին միայն ԼՂ-ի ներսում: Ադրբեջանի բանակը, ոստիկանությունը և անվտանգության ուժերը չէին կարող մտնել ԼՂ-ի տարածք՝ առանց տեղի իշխանությունների թույլտվության: Կարգավորման մյուս փաթեթների նման, այս

²⁹ ԼՂ հարցի կարգավորման Փուլային տարբերակի նախագիծ, 1997թ., <https://www.aniarc.am/2022/12/02/step-by-step-1997-december-nkr/>

³⁰ Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահություն, 10 նոյեմբեր, 1998թ., <https://www.aniarc.am/2022/11/10/common-state-1998-nk/>

տարբերակը ևս նախատեսում էր զորքերի դուրսբերում ԼՂԻՄ-ի հարակից շրջաններից, բացառությամբ Լաչինի, նախատեսվում էր փախստականների վերադարձ: Այս տարբերակը մերժում է Ադրբեջանը: Հեյդար Ալիևը 2001թ. փետրվարին խորհրդարանում ասում է՝ այս տարբերակը ավելի սև է, քան սևը, ի համեմատ մյուս տարբերակների սա ավելի վնաս է Ադրբեջանի համար³¹: Ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի³²՝ այս տարբերակը նախատեսում էր լայն ինքնավարություն և սա այն էր ինչը առաջարկվում էր Լիսաբոնյան գագաթնաժողովում, և որի վրա նա վետո կիրառեց: Բացի այդ կարգավիճակի հարցի վերաբերյալ դժվար էր կոնսենսուսի գալ, որն, իհարկե, մինչ օրս էլ մնում է ամենադժվար հարցը:

Փաստորեն այս տարբերակով ևս Արցախը պետք է լիներ Ադրբեջանի կազմում՝ նրա հետ կազմելով մեկ պետություն՝ Ադրբեջանի Հանրապետություն անունով: Սա ինչ-որ չափով բխում էր այն փաստից, որ ժամանակից Ադրբեջանը ստեղծվել էր որպես ինտերնացիոնալ պետություն: Բացի այդ սա կարգավորման վերջին տարբերակն էր, որում Արցախը ներգրավված էր որպես բանակցության կողմ: Բանակցային գործընթացից Արցախի դուրս թողումը բացասական երևույթ էր, նա պետք է լինի հակամարտության կարգավորման լիարժեք կողմ, այլ ոչ թե բանակցային գործընթացի առարկա:

Քի Ուեսթյան տարբերակ: Կարգավորման այս տարբերակի մասին հստակ տեղեկություններ չկան, քանի որ մինչ օրս այդ փաստաթուղթը գաղտնագերծված չէ: Քի Ուեսթոնը բանակցությունների մասին գրել է լրագրող Թաթուլ Հակոբյանը, ըստ որի՝ 2005 կամ 2006 թվականին որպես լրագրող հնարավորություն է ունեցել արտագործնախարարությունում շատ կարճ ժամանակամիջոցում կարդալ մի փաստաթուղթ, որի անունն է Քի-Ուեսթյան փաստաթուղթ (այն մինչև այսօր չի հրապարակվել մամուլում): Համաձայն այդ տարբերակի՝ Ղարաբաղը Լաչինի միջանցքով միացվում էր Հայաստանին, և դրա փոխարեն Ադրբեջանը Մեդրիի միջանցքով միանում էր Նախիջևանին: Երբ խոսք էր գնում Ադրբեջանից Նախիջևան Մեդրու վրայով տարածքի մասին, օգտագործված էր հետևյալ ձևակերպումը՝ *Sovereign Passage* (սուվերեն միջանցք)³³: Հարկ է նշել, որ սույն բանակցային փուլը տեղի ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի միջնորդությամբ: Բանակցություններից հետո, երբ Հեյդար Ալիևը վերադարձավ Ադրբեջան՝ որոշ ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաներ հրաժարական տվեցին, և նախագահը մերժեց այդ տարբերակը: Ըստ Վարդան Օսկանյանի³⁴ Քի Ուեսթյան բանակցությունների արդյունքում ԼՂԻՄ-ը դուրս է բերվում Ադրբեջանի վերահսկողությունից, և անցնում Հայաստանի ինքնիշխանության ներքո, բացի այդ Լաչինը ևս անցնում էր Հայաստանին՝ Ադրբեջանի կապը Նախիջևանի հետ Մեդրիի միջոցով ապահովելու դիմաց:

Պետք է նշենք, որ այս փուլի վերաբերյալ հայտարարությունները շատ հակասական են: Առաջին նախագահը նշում է, որ դրանով Արցախը փոխանակում են Մեդրիի հետ, իսկ ըստ երկրորդ նախագահի՝ խոսքը ճանապարհի մասին է, և այդ առաջարկը արել է Ադրբեջանի նախագահը: Այն հանգամանքը, որ մինչ օրս այդ փաստաթուղթը գաղտնի է պահվում, որոշ չափով հասկանալի է: Սակայն բանակցային գործընթացի որոշ

³¹ Ընդհանուր պետության վերաբերյալ Ադրբեջանի նախագահի դիրքորոշումը, <http://www.aniarc.am/2020/02/05/tatul-hakobyan-book-chapter-in-eastern-armenian-on-common-state/>

³² ՀՀ առաջին նախագահի հարցազրույցը Կենտրոն հեռուստատալիքին, 2017թ., <https://www.youtube.com/watch?v=iI6cODHIJGs>

³³ ԳԱԼԱ-ի զրույցը Թաթուլ Հակոբյանի հետ, 2017թ., <https://www.aniarc.am/2017/03/31/gala-interview-tatul-hakobyan-territorial-swap/>

³⁴ Վարդան Օսկանյան, Անկախության ճանապարհով. Փոքր երկրի մեծ մարտահրավերները, Երևան 2013թ., էջ 193-198

ժամանակահատվածներում ընթացած պրոցեսների «փակ» լինելու և հասարակությունից գաղտնի պահելու հանգամանքը ինքնին տարակուսելի է և մտածելու տեղիք է տալիս այն դեպքում, երբ դրանցից անցել է մոտ երկու տասնամյակ:

Մադրիդյան սկզբունքներ: Երկար ժամանակ ընդհատումից հետո՝ 2004թ.-ին, բանակցությունները վերսկսվեցին արդեն Պրահյան գործընթացի շրջանակներում: Այս գործընթացի հիմնական նորամուծությունը *հետաձգված հանրաքվեի գաղափարն էր*³⁵, որը ենթադրում էր հետևյալը՝ ղարաբաղյան ուժերը դուրս են գալիս հինգ շրջաններից, իսկ Քարվաճառի վերադարձը կապվում էր ԼՂ-ում սպասվելիք հանրաքվեի ժամկետների հետ: Քանի դեռ հանրաքվե չի կայացել ԼՂ-ում, Քարվաճառը մնալու էր հայկական ու միջազգային համատեղ հսկողության տակ: Կողմերի միջև վիճելի էր նաև Լաչինի միջանցքի կարգավիճակի հարցը: Արդեն 2007թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում կողմերին է ներկայացվում «Մադրիդյան սկզբունքներ» անվանմամբ կարգավորման նոր տարբերակը³⁶: Կարգավորման այդ տարբերակը նախատեսում էր այն սկզբունքները, որի հիման վրա պետք է լուծվեր ԼՂ-ի հարցը: Ըստ դրա հակամարտությունը պետք է կարգավորվի ՅԵԼԻՍԻԿյան եզրափակիչ ակտի³⁷ երեք՝ *ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառման* սկզբունքների հիման վրա: Այս փաթեթի մասին խոսել է ԵԱՀԿ ԱՄՆ համանախագահ Մեթյու Բրայդան³⁸ և ներկայացրել որոշ դրույթներ: Ըստ նրա՝ հայկական զորքերը պետք է դուրս բերվեին գրավյալ տարածքներից, տեղակայվեին միջազգային խաղաղապահներ, տնտեսական և դիվանագիտական կապեր հաստատվեին Յայաստանի ու Ադրբեջանի միջև և այլն: Կար ևս մի կարևոր դրույթ, այն էր՝ ԼՂ-ի կարգավիճակի հարցում հանրաքվեի անցկացումը: 2009թ. հուլիսին Լ'Աբվիլայում ԵԱՀԿ համանախագահող երկրների նախագահների հայտարարությունը³⁹ կարևոր նշանակություն ունեցավ: Առաջին անգամ պաշտոնապես հրապարակվեցին 2007թ. Մադրիդում ներկայացված բանակցային փաստաթղթի հիմնական դրույթները, ինչը հնարավորություն տվեց պաշտոնական տեղեկության հիման վրա գնահատել գործընթացը: Դրա բովանդակությունից պարզ է դարձել, որ ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ և իրական արտահայտում⁴⁰: Ըստ այս փաստաթղթի՝ ԼՂ բնակչությունը ասելով հասկացվում են 1988թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը: Պլեբիսցիտի ընթացքում *հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն*: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ հակամարտության սկզբին ԼՂ-ի բնակչության էթնիկ կազմին: 1989թ.-ին ԽՍՀՄ վերջին մարդահամարի⁴¹ ⁴² համաձայն՝ ԼՂ-ի բնակչության 21,52%-ը

³⁵ Թաթուլ Հակոբյան, Կարգավորման բանակցային գործընթաց, 2016թ.,

<https://www.civilnet.am/news/167855/%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6->

[%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%A8/](https://www.civilnet.am/news/167855/%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%A8/)

³⁶ OSCE Minsk Group Co-Chairs issue statement on Nagorno-Karabakh, 29 November 2007,

<https://www.osce.org/mg/49237>

³⁷ ԵԱՀԿ համաժողովի շեյխինկյան եզրափակիչ ակտ, 1975թ., <https://www.osce.org/hy/mc/39507>

³⁸ ԵԱՀԿ ԱՄՆ համանախագահ Մեթյու Բրայդայի հարցազրույցը, <https://www.azatutyun.am/a/1582680.html>

³⁹ Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, 10 July, L'Aquila, <https://www.osce.org/mg/51152>

⁴⁰ Մադրիդյան սկզբունքներ, <http://www.aniarc.am/2022/08/06/madrid-principals-armenian-text/>

⁴¹ Rufat J. Efendiyev, Этно-демографическая эволюция населения Карабаха: этапы развития, 2021г., стр. 20

⁴² Всесоюзная перепись населения 1989 года. Распределение городского и сельского населения областей республик СССР по полу и национальности, http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_89.php?reg=71

ադրբեջանցիներ էին, իսկ 76,92%-ը՝ հայեր: Ուստի, հանրաքվեի անցկացման պարագայում ԼՂ-ի բնակչությունը կիրացներ իր ինքնորոշման իրավունքը՝ Ադրբեջանի կազմից դուրս գալով: Ադրբեջանը ևս ընդունեց կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե անցկացնելը, սակայն հասկանալով, որ դա բացասական կազդի իրենց վրա՝ այլ կերպ վարվեց: Ադրբեջանի այն ժամանակվա ԱԳ նախարարը հանրաքվեի հարցը այլ կերպ էր մեկնաբանում⁴³: Ըստ նրա՝ Ադրբեջանի Սահմանադրության համաձայն, եթե հարցը վերաբերում է պետության տարածքային ամբողջականությանը, ապա այդ հանրաքվեն պետք է անցկացվի հանրապետության ամբողջ տարածքում, և դրան պետք է մասնակցեն բոլոր քաղաքացիները: Սա խեղաթյուրում էր վերոնշյալ դրույթը, և սրա նպատակը միմիայն տվյալ իրավիճակից դուրս գալու ելք գտնելն էր: Շատ կարևոր դրույթ էր այն, որ հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը անսահմանափակ էր, այսինքն հնարավոր էր, որ հանրաքվեի դրվեր այնպիսի կարգավիճակ, որը կնախատեսվեր Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներից դուրս: Կարգավորման այս տարբերակի էական նշանակությունը այն էր, որ սահմանվեց արցախահայության ինքնորոշման իրավունքը և հանրաքվեի միջոցով այն իրացնելու հնարավորությունը:

Կազանյան գործընթաց: 2011թ. այս փաստաթղթով դարձյալ նախատեսվում էր տարածքների վերադարձ 5+2 տարբերակով, ԼՂ-ի միջանկյալ կարգավիճակ, փախստականների վերադարձ, հանրաքվե և այլն⁴⁴: Ըստ ՀՀ երրորդ նախագահի՝ 2011թ.-ին Կազանում արդեն մոտ էին ԼՂ-ի հարցի լուծմանը, սակայն Ադրբեջանը միշտ նոր նախապայմաններ էր առաջ քաշում և հրաժարվում ստորագրել այդ փաստաթուղթը⁴⁵: Մանավորապես՝ Բաքուն դեմ էր, որ հանրաքվեում առաջ քաշվող հարցերը պետք է լինեին առանց սահմանափակման, նաև դեմ էր Քարվաճառի վերադարձի ժամկետը կապել հանրաքվեի հետ և այլն: Ադրբեջանը հասկանում էր, որ Մադրիդում և Կազանում ներկայացված փաստաթղթերով նախատեսված հանրաքվեի դեպքում կկորցնեին Արցախը և դրա նկատմամբ բոլոր իրավունքները: Սրան հաջորդեց ապրիլյան քառօրյա պատերազմը, որը սանձազերծվել էր Ադրբեջանի կողմից, և դադարեցվել էր Ռուսաստանի միջնորդությամբ: Հատկանշական է այն փաստը, որ Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևը հայտարարում էր, որ նրան ճնշում էին. «Փակ դռների հետևում մեզ վրա ճնշումներ են գործադրվում, որ մենք համաձայնենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Մենք շատ մանրամասներ չենք բացահայտում, քանի որ կան դիվանագիտության կանոններ: Բայց Ադրբեջանի սևացմանն ուղղված Արևմուտքի, տարբեր ոչ կառավարական կազմակերպությունների և երկրի ներսում «հինգերորդ շարասյան» արշավի հիմքում ընկած է ճնշումը՝ նպատակ ունենալով ստանալ Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման համաձայնություն, սակայն դա չի լինի քանի մենք իշխանության ղեկին ենք»⁴⁶: Բանակցային սեղանի շուրջ որևէ հաջողության չհասնելով՝ Ադրբեջանն ամեն կերպ փորձում էր տապալել բանակցային գործընթացը՝ դիմելով տարբեր սադրանքների՝ սահմանային միջադեպերի, բախումների, ռազմական գործողությունների և այլն: Սրանով նպատակ էր հետապնդում հիմնախնդիրը լուծել ոչ թե խաղաղ ձևով, այլ ուժի միջոցով:

Լավրովյան պլան: Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո առաջ է քաշվել մի նոր տարբերակ, որը կոչվում էր Լավրովյան պլան: Թեև Ռուսաստանը հերքում էր,

⁴³ Ադրբեջանի ԱԳՆ Էլդար Մամեդյարով, <https://vestikavkaza.ru/amp/16878>

⁴⁴ Կազանյան փաստաթուղթ, <http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/>

⁴⁵ Полная версия интервью президента Армении Сержа Саргсяна Дмитрию Киселеву, <https://www.youtube.com/watch?v=PwSaiBK25EM>

⁴⁶ **Алиев И.**, Азербайджан пытаются заставить признать независимость Карабаха, <https://eadaaily.com/ru/news/2016/10/07/aliev-azerbaydzhan-pytayutsya-zastavit-priznat-nezavisimostkarabaha>

այնուամենայնիվ դրա մասին փաստում էին որոշ աղբյուրներ: Ըստ դրանցից մեկի՝ Լավրովյան պլանով գրեթե նույնն էր ինչ Մադրիդյան սկզբունքներն ու Կազանյան պլանը, սակայն նախատեսվում էր ոչ թե միջազգային, այլ ռուս խաղաղապահների տեղակայում ԼՂԻՄ-ի տարածքում⁴⁷: Բացի այդ ԼՂ-ի կարգավիճակի հարցը հստակեցված չէր ու անորոշության էր մատնված: Նույնը նաև առաջարկվել էր Կրակովում 2018թ.-ին⁴⁸, սակայն ըստ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի⁴⁹՝ Հայաստանը կողմ էր, սակայն Ադրբեջանը մերժում էր կարգավորման բանակցային այս փաթեթները: 2018թ.-ին Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն, և նոր իշխանության որոշ պաշտոնայիններ, ինչպես նաև վարչապետը հայտարարել են, որ ԼՂ-ի համար կարգավիճակ չէր նախատեսվում Լավրովի պլանով, սակայն ի պատասխան սրա այդ ժամանակ ԵԱՀԿ Ռուսաստանի համանախագահը հայտարարեց, որ «առանց ոչնչի տարածքների հանձնում» ձևակերպումը ճիշտ չէ⁵⁰, քանի որ այն նաև նախատեսում էր ԼՂ-ի հետագա կարգավիճակի որոշումը հանրաքվեի միջոցով՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ն հովանավորությամբ:

Հատկանշական էր, որ հանրաքվեի նախատեսումը և այդ հանրաքվեի դրվող հարցերի շրջանակի անսահմանափակ լինելը ևս արձանագրված էին այս փաստաթղթերում և դրանք շատ կարևոր դրույթներ են:

2020թ. փետրվարին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ֆեյսբուքյան կայքում հրապարակել է 6 կետեր, որոնք նա կոչել էր **Մյուսխենյան սկզբունքներ**⁵¹

1. Լեռնային Ղարաբաղը անկախություն է ստացել այնպես, ինչպես Ադրբեջանը:
2. Լեռնային Ղարաբաղը կոնֆլիկտի կողմ է, առանց որի հետ բանակցելու հնարավոր չէ լուծել կոնֆլիկտը:
3. *Չկան տարածքներ, կա անվտանգություն. Լեռնային Ղարաբաղը չի կարող զիջել իր անվտանգությունը:*
4. Հնարավոր չէ կոնֆլիկտը լուծել մեկ կամ երկու գործողությամբ, բանակցային գործընթացում անհրաժեշտ են «միկրո հեղափոխություններ», ապա «մինի հեղափոխություններ», ապա ճեղքում:
5. Հարցի որևէ լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի ժողովրդի համար, Ղարաբաղի ժողովրդի համար, Ադրբեջանի ժողովրդի համար և Հայաստանն ու Ղարաբաղը պատրաստ են լրջագույն ջանքեր գործադրել նման լուծում գտնելու համար: Այսպիսի պատրաստակամություն պիտի ցուցաբերի նաև Ադրբեջանը:
6. ԼՂ հարցը չունի ռազմական լուծում: Եթե որևէ մեկը կասի, որ հարցը ռազմական լուծում ունի, Ղարաբաղի ժողովուրդը կասի՝ ուրեմն այն վաղուց լուծված է:

Այն, որ հակամարտությունը պետք է լուծվի երկու կողմերի փոխզիջման վրա՝ փաստ է: Հարկ է նշել, որ ԵԱՀԿ ռուսաստանցի համանախագահ Իգոր Պոպովը 2016թ.

⁴⁷ International crisis group, Digging out of Deadlock in Nagorno-Karabakh, REPORT 255 / EUROPE & CENTRAL ASIA 20 DECEMBER 2019, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/255-digging-out-deadlock-nagorno-karabakh>

⁴⁸ ԵԱՀԿ Համանախագահների առաջարկ, Կրակով 2018թ., <https://www.lin.am/2642543.html>

⁴⁹ Սերժ Սարգսյանի հարցազրույցը ԼՂ հիմնախնդրի բանակցային գործընթացի վերաբերյալ, <https://www.youtube.com/watch?v=IyyB-BIYTF4>

⁵⁰ ԵԱՀԿ Ռուսաստանի համանախագահի պատասխանը ՀՀ-ն հայտարարություններին, <https://armeniasputnik.am/20210113/rdn-chi-arajarkel-hhin-henc-aynpes-taracqner-tal-popov-herqel-e-pashinyani-hodvac-26086783.html>

⁵¹ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան գրառում, <https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/255720157460022/>

հայտարարել էր՝ որոշակի փուլում Արցախը պետք է վերադառնա բանակցությունների սեղանի շուրջ:⁵² «Մենք ելնում ենք նրանից, որ որոշակի փուլում Ղարաբաղը պետք է վերադառնա այդ գործընթաց, որովհետև, վերջիվերջո, որոշվում է այն մարդկանց ճակատագիրը, ովքեր այստեղ ապրում են»:

Թերևս բանակցային գործընթացի այս փուլերն էին, որոնք եղել են մինչև 2020թ. սեպտեմբերի պատերազմը, որ սանձազերծել էր Ադրբեջանը՝ խախտելով ամրագրված ու իր իսկ կողմից ընդունված սկզբունքները: Պատերազմից հետո ստեղծված իրավիճակում Ադրբեջանը հրաժարվում է բանակցել ԼՂ-ի հարցով՝ համարելով այն լուծված, իսկ ԼՂ-ի բնակիչներին համարում է որպես իր քաղաքացիներ և նրանց հետ կապված հարցերը՝ որպես Ադրբեջանի ներքին հարց: Սրան ի պատասխան ԵԱՀԿ Մինսկի համանախագահությունն ու համանախագահող պետությունները բազմիցս հայտարարել են, որ ԼՂ-ի հարցը լուծված չէ և պետք է վերադառնալ բանակցային սեղանի շուրջ: Այժմ ևս ընթանում են որոշ պրոցեսներ, և բանակցային գործընթացը շարունակվում է, սակայն հիմնականում դրանց վերաբերյալ տեղեկությունները կամ սահմանափակ են, կամ էլ գաղտնագերծված չեն: ՀՀ-ը որդեգրել է «խաղաղության օրակարգ», որը տարակուսելի է, այն դեպքում, երբ Ադրբեջանը պնդում է, որ պետք է միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչեն՝ դրանով իսկ ԼՂ-ը ճանաչելով Ադրբեջանի կազմում: 2022թ.-ի հոկտեմբերի 27-ին «Վալդայ» ակումբի ֆորումի ընթացքում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը իր ելույթում հայտարարել է, որ Հայաստանի ղեկավարությունը մերժեց մինչ 2018թ. ձևավորված կարգավորման սխեման՝ ամեն ինչ զրոյական կետից սկսելու ճանապարհով, ինչը հանգեցրել է ձևավորված իրավիճակին⁵³: Խնդրի լուծումը ներկայացնելով որպես այսպես կոչված «խաղաղության պայմանագրի» կնքում ու Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանային հարցի լիարժեք կարգավորում՝ Վ. Պուտինը նշել է, որ ի տարբերություն «վաշինգտոնյան» տարբերակի, որը նախատեսում է «*Ադրբեջանի ինքնիշխանության ճանաչում ամբողջ Ղարաբաղի վրա*», իրենց մոտեցումն այն է, որ «*եթե հայ ժողովուրդը և հայկական ղեկավարությունը համարում է, որ Ղարաբաղն ունի իր առանձնահատկությունները, որ պետք է դա ինչ-որ ձևով արձանագրել ապագա խաղաղության պայմանագրում, դա նույնպես հնարավոր է*: Մենք կպաշտպանենք հայ ժողովրդի ցանկացած ընտրություն»:

Պետք է արձանագրենք, որ այդ պայմանագրի մեջ Արցախի հիմնախնդիրը չպետք է ներառի, դա վերաբերում է միայն Ադրբեջանին և Հայաստանին: Խաղաղության պայմանագրի երկու տարբերակ կա՝ Ռուսաստանի կողմից առաջարկվող և Արևմտյան փաթեթը: Թե այս երկուսից որը կընտրի Հայաստանը՝ ցույց կտա ժամանակը:

2. Ինքնորոշման իրավունքի ընկալումը միջազգային իրավունքում և Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը

2.1. Արցախը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում և անկախություն է ձեռք բերել ԽՍՀՄ սահմանադրությանը և օրենքներին համապատասխան

Անդրադառնալով Արցախի Հանրապետությանը՝ պետք է ընդգծենք, որ պատմականորեն այն հանդիսանում է հայկական տարածք: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, փաստորեն, իրավական տեսանկյունից անթերի ու անառարկելի իրացրեց իր ինքնորոշման իրավունքը՝ հռչակելով իր անկախությունը այնպիսի տարածքներում, որոնց հետ

⁵² ԵԱՀԿ ռուս համանախագահ Իգոր Պոպով, <https://www.panorama.am/am/news/2013/12/18/igor-popov/383885>

⁵³ Заседание Международного дискуссионного клуба «Валдай», <http://kremlin.ru/events/president/news/69695>

Ադրբեջանը իրավական որևէ առընչություն չի ունեցել և երբևիցե չեն պատկանել անկախ Ադրբեջանին: Դեռևս 1920թ. դեկտեմբերի 1-ին, երբ Ադրբեջանը դիմել է՝ միանալու Ազգերի Լիգային, վերջինս մերժել է դիմումը հիմնավորելով, որ Ազգերի Լիգայի դաշնագրի 1-ին հոդվածի համաձայն Ադրբեջանի Հանրապետությունը չի կարող համարվել որպես *դե-յուրե «լիովին ինքնիշխան պետություն»*, քանի որ այն նախկինում դե յուրե չի ճանաչվել Ազգերի Լիգայի անդամ որևէ պետության կողմից:

Ադրբեջանը մինչ այդ երբեք որպես պետություն գոյություն չի ունեցել: Այն միշտ ընդգրկված է եղել ավելի մեծ տերությունների կազմի մեջ ինչպիսիք են Ռուսաստանի կայսրությունը, Պարսկաստանը և այլն, իսկ «Ադրբեջան» անվանումն էլ ոչ այլ ինչ է, քան հարևան պարսկական գավառի անուն, որն ընտրվել է որպես նորաստեղծ հանրապետության անվանում: Բացի այդ, Ազգերի Լիգան դիմումի մերժման հիմքում դրել էր տարածքային վեճերը, որն ուներ Ադրբեջանը, այսինքն Արցախը ևս համարվում էր վիճելի տարածք, այլ ոչ թե Ադրբեջանի մաս:

1990թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը⁵⁴, որը կարգավորում է ԽՍՀՄ-ն կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու գործընթացը, որից կարող են օգտվել նաև ինքնավար կազմավորումները, այդ թվում՝ ԼՂԻՄ-ը: Ուստի, Լեռնային Ղարաբաղի կողմից 1991թ. սեպտեմբերի 2-ին անկախության հռչակումը⁵⁵ և ինքնորոշման իրավունքի իրացումը հանրաքվեի միջոցով ԽՍՀՄ վերոնշյալ օրենքի տեսանկյունից անթերի էր: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի ինքնավար հանրապետություններ, *ինքնավար մարզեր* և ինքնավար շրջաններ ընդգրկող միութենական հանրապետությունում *հանրաքվե անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարության համար առանձին*: Ինքնավար կազմավորումների ժողովուրդները պահպանում են ԽՍՀՄ-ում, կամ *անջատվող միութենական հանրապետությունում իրենց մնալու հարցը ինքնուրույն լուծելու*, ինչպես նաև իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը բարձրացնելու իրավունքը: Միութենական հանրապետությունում, որի տարածքում կան ազգային խմբերի կոմպակտ բնակության վայրեր, որոնք կազմում են տվյալ բնակավայրի բնակչության մեծամասնությունը, հանրաքվեի արդյունքները որոշելիս այդ բնակավայրերում քվեարկության արդյունքները հաշվի են առնվում առանձին⁵⁶: Փաստորեն օրենքը սահմանեց ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի առաջնահերթությունը՝ հաստատելով, որ ԽՍՀՄ քաղաքական և իրավական համակարգից դուրս ինքնավար միավորները պահպանում են իրենց ազգային հարցը ինքնուրույն լուծելու իրավունքը: Օրենքը ԼՂԻՄ-ին և հարակից հայերով բնակեցված Շահումյանի շրջանին տալիս էր ինքնիշխան պետություն հռչակելու լիակատար իրավունք այն բանից հետո, երբ Բաքվում հայտարարվեց 1918-1920 թվականներին գոյություն ունեցող պետական համակարգի վերականգնման մասին, որը իրավաբանորեն համարժեք էր ԽՍՀՄ-ից նրա դուրս գալուն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որևէ կապ չի ունեցել և չունի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան այս տարածաշրջանում ձևավորվեցին ու հռչակեցին իրենց անկախությունը երկու տարբեր պետություններ՝ Ադրբեջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի

⁵⁴ Закон СССР от 3 апреля 1990 г. № 1409-І «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР»

⁵⁵ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն(1991թ. օգոստոս-1992թ. հունվար)», էջ 94-96

⁵⁶ Закон СССР от 3 апреля 1990 г. N 1409-І "О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР", <https://base.garant.ru/6335629/5ac206a89ea76855804609cd950fca7/>

Հանրապետությունը: Սակայն վերջինս չի ընդունվել միջազգային հանրության կողմից, ինչի մասին է վկայում հակամարտության պատմությունը:

2.2. Արցախի ժողովուրդն ունի ինքնորոշման իրավունք

Ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է, որը հանդիսանում է *jus cogens* նորմ⁵⁷, այսինքն այն միջազգային իրավունքում պարտադիր նորմ է, և դրանից որևէ շեղում չի թույլատրվում: Ինքնորոշումը նշանակում է մարդկանց օրինական իրավունքը՝ որոշելու իրենց ճակատագիրը: Ինքնորոշումը բխում է միջազգային սովորութային իրավունքից, բայց նաև ճանաչված է որպես իրավունքի ընդհանուր սկզբունք և ամրագրված է մի շարք միջազգային պայմանագրերում: Նախևառաջ ինքնորոշման իրավունքը ամրագրված է ՄԱԿ Կանոնադրությամբ⁵⁸, ըստ որի ՄԱԿ-ը նպատակ ունի ազգերի միջև բարեկամական հարաբերություններ զարգացնել՝ հիմնված ժողովուրդների հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի հարգման վրա, ինչպես նաև ձեռնարկել այլ համապատասխան միջոցներ՝ ամրապնդելու համաշխարհային խաղաղությունը: Այսինքն ժողովուրդները, հիմնվելով հավասար իրավունքների և հնարավորությունների արդար հավասարության սկզբունքի վրա, իրավունք ունեն ազատորեն ընտրել իրենց ինքնիշխանությունը և միջազգային քաղաքական կարգավիճակը՝ առանց միջամտության: Այս դրույթի վերլուծությունից երևում է, որ ցանկացած ժողովուրդ ինքն է որոշում և տնօրինում իր ճակատագիրը: Հարկ է նշել նաև, որ Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին ՄԱԿ-ն հռչակագրում ևս արձանագրվել է⁵⁹, որ *բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք* և այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն որոշում են իրենց *քաղաքական կարգավիճակը և հետամուտ են լինում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը*: Հատկանշական է, որ ինքնորոշման իրավունքի կարևորության մասին դեռևս 20-րդ դարի սկզբին նշում էին ԽՍՀՄ և ԱՄՆ-ի այն ժամանակվա առաջնորդները: Վուդրո Վիլսոնը նշում էր՝ «ազգային ցանկությունները պետք է հարգվեն, այժմ մարդիկ կարող են ենթարկվել և կառավարել դրանք միայն իրենց համաձայնությամբ: «Ինքնորոշումը» պարզապես արտահայտությունն է, դա գործողության իմպերատիվ սկզբունք է»⁶⁰: Ինքնորոշման իրավունքը առաջին անգամ դրսևորվել է իմպերիալիստական գաղափարախոսության անկման և երկրների ապագադրության շրջանում: Արդի շրջանում ինքնորոշման իրավունքի վերաբերյալ կան որոշ հիմնահարցեր, որոնք երկմտելու տեղիք են տալիս՝ պայմանավորված ինքնորոշման իրավունքի նորմերի տարրնկալման հետ: Այդ իսկ պատճառով ահրաժեշտ է դրանց համապարփակ ուսումնասիրությունը ու մեկնաբանությունը՝ երկակի ստանդարտներից խուսափելու համար:

Ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթներ սահմանված են նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, ինչպես նաև «Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով⁶¹: Երկու դաշնագրերում էլ ինքնորոշման իրավունքը ներկայացված է որպես

⁵⁷ "Jus cogens | Definition of jus cogens in English by Oxford Dictionaries",

<https://web.archive.org/web/20110717135623/http://oxforddictionaries.com/definition/jus+cogens>

⁵⁸ United Nations, Chapter I - Purposes and Principles of Charter of the United Nations

⁵⁹ United Nations General Assembly Resolution 1514,

https://en.wikisource.org/wiki/United_Nations_General_Assembly_Resolution_1514

⁶⁰ President Wilson's Address to Congress, Analyzing German and Austrian Peace Utterances,

<http://www.gwpda.org/1918/wilpeace.html>

⁶¹ International Covenant on Civil and Political Rights, International Covenant on Economic, Social and Cultural Rights, 16 December 1966, General Assembly resolution 2200A (XXI)

ընդհանուր դրույթ: Ըստ դրանց՝ բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հետամուտ են լինում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը: Մեր կարծիքով սույն դրույթը առանձնակի կարևոր նշանակություն ունի, քանի որ սրա իրագործման հետ է կապված մարդու մյուս իրավունքների իրացումը, դրանք արդյունավետ երաշխավորելու ու ապահովելու համար: Վերոնշյալ սահմանումից կարող ենք փաստել, որ ինքնորոշման իրավունքի սուբյեկտ հանդիսանում է ժողովուրդը, այդ ժողովուրդն է որոշում իր քաղաքական կարգավիճակը: Ինքնորոշման մասին նաև հիշատակում է «Յելսինկյան եզրափակիչ ակտը»⁶²: Այն սահմանում է, որ ելնելով իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի սկզբունքից, բոլոր ժողովուրդները լիակատար ազատության պայմաններում իրավունք ունեն առանց արտաքին միջամտության որոշել իրենց արտաքին ու ներքին քաղաքական կարգավիճակը, երբ և ինչպես ցանկանան, սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային զարգացումը: Ինքնորոշման իրավունքը պետք է դասել ժողովրդի հավաքական, այսինքն կոլեկտիվ իրավունքների դասին⁶³, այլ ոչ թե անձնական: Ինչպես նշեցինք ինքնորոշման սուբյեկտը ժողովուրդն է, սակայն պետք է հստակ սահմանենք «ժողովուրդ»-ի հասկացությունը: Ժողովրդի ինքնորոշման իրավունքին անդրադարձ է կատարվել 2010 թվականի Արդարադատության միջազգային դատարանի կողմից Կոսովոյի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության մեջ՝ դատավորի առանձին կարծիքում, համաձայն որի դրա բնութագրիչ գծերն են՝ 1) ավանդույթներ և մշակույթ, 2) էթնիկություն, 3) պատմական կապեր և ժառանգություն, 4) լեզու, 5) կրոն, 6) ինքնության զգացում/նմանություն, 7) որպես ժողովուրդ հանդես գալու կամք, 8) ընդհանուր տառապանք⁶⁴: Ինքնորոշվող սուբյեկտը պետք է ունենա վերոնշյալ բոլոր չափանիշները՝ իր իրավունքը իրացնելու համար:

Արցախի ժողովուրդը ունի ինքնորոշման իրավունք, քանի որ վերոնշյալ բոլոր չափանիշներին համապատասխանում է: Արցախի ժողովուրդը ինքնորոշման սուբյեկտ է, ունի միևնույն էթնիկական կազմ, լեզու, կրոն, մշակույթ, որոնցով էլ տարբերվում է Ադրբեյջանի ազգաբնակչությունից:

2.3. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումն առանց անկախ պետականության հնարավոր չէ

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի հարաբերակցությանը՝ պարզելու՝ կա՞ հակասություն դրանց միջև: Հարկ է նշել, որ երկուսն էլ հանդիսանում են միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներ, սակայն դրանց մեկնաբանումը հաճախ լինում է քաղաքական շահերից ու նկատառումներից ելնելով՝ դրանով իսկ որոշ հակասություններ ու թյուր կարծիքներ առաջացնելու միտումով: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ Կոսովոյի նախադեպին՝ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական

⁶² Organization for Security and Co-operation in Europe, Helsinki final act, 1975

⁶³ Western Sahara, ICJ Advisory Opinion, Reports 1975, էջ 12,31, որտեղ ԱՄԴ-ը վկայակոչեց ինքնորոշման սկզբունքը՝ որպես ժողովրդի իրավունք

⁶⁴ United Nations, International Court of Justice Archived 2017-02-22 at the Wayback Machine 2010 Kosovo Case, Separate Opinion of Judge A. A. Cançado Trindade

եզրակացությանը⁶⁵, որտեղ դատարանը հստակ արձանագրել է, որ Կոսովոյի միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպ արգելված չէ, ինչպես նաև այն, որ տարածքային ամբողջականության սկզբունքը տարածվում է միայն միջպետական հարաբերությունների վրա:

Հարկ ենք համարում անդրադառնալ այն դատական նախադեպերին, որոնք կարող են էական նշանակություն ունենալ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ որոշ հարցերի անդրադառնալիս: Ազգային և միջազգային դատարանները մի քանի անգամ անդրադարձել են ինքնորոշման խնդրին: Ներքին և արտաքին ինքնորոշման տարբերակման ամենանշանակալի գործերը ներառում են Ալանդյան կղզիների գործը և Զվեբեկի գործը: Ալանդյան կղզիները փոքր կղզի պետություն է, որը գտնվում է Ֆինլանդիայի և Շվեդիայի միջև: Երբ Ֆինլանդիան անկախություն ձեռք բերեց համաշխարհային պատերազմից հետո, Ալանդյան կղզիները դարձան նոր Ֆինլանդիայի պետության մի մասը⁶⁶: Ալանդները պնդում էր, որ իրենք էթնիկ շվեդներ են և կօգտագործեն իրենց արտաքին ինքնորոշման իրավունքը՝ Ֆինլանդիայից անջատվելու և Շվեդիային միանալու համար: Ալանդյան կղզիների գործն ավարտվեց Չեկոսլովակիայի հանձնաժողովի առջև, որը գործում էր Ազգերի լիգայի հովանու ներքո: Հանձնաժողովը որոշեց, որ Ալանդները իրավունքներ ունեն Ֆինլանդիայի տարածքում ինքնավարության տարբեր ձևերի, սակայն Ֆինլանդիայից անջատվելու իրավունքը չի իրացվի, քանի դեռ Ֆինլանդիան հարգում է Ալանդյան կղզիների կողմից Ֆինլանդիայի ներսում ինքնավարության իմաստալից կիրառումը: Հանձնաժողովն առաջարկել է, որ անջատումը կարող է հասանելի լինել *որպես «վերջին միջոց, երբ պետությունը չունի կամք, կամ ուժ՝ սահմանելու և կիրառելու արդար և արդյունավետ երաշխիքներ»* փոքրամասնությունների խմբերի իրավունքների համար⁶⁷: Վերոնշյալից կարող ենք փաստել, որ Ֆինլանդիայից անջատվելու իրավունք չտալով՝ Ալանդյան կղզիների համար նախատեսվեց *ներքին ինքնորոշում*, և միայն հետագայում տրվեց *արտաքին ինքնորոշման* իրավունք՝ այսինքն մայր պետությունից անջատվել՝ որպես վերջին տարբերակ:

Նմանատիպ կարծիք արտահայտվեց նաև Կանադայի ազգային դատարանի կողմից՝ հանձին Գերագույն դատարանի: Զվեբեկի բնակչությունը 20-րդ դարի երկրորդ կեսին Կանադայից պահանջում էր ավելի լայն իրավունքներ⁶⁸: Այս պահանջները իրենց զագաթնակետին հասան 1995թ. հանրաքվեով, որի ժամանակ Զվեբեկի բնակչությանը խնդրեցին արտահայտել իրենց տեսակետը Կանադայից անջատվելու վերաբերյալ՝ անկախ Զվեբեկ պետություն ստեղծելու համար: Չափազանց փոքր տարբերությամբ Զվեբեկի բնակչությունը քվեարկեց Կանադայի մաս մնալու օգտին: Կանադայի խորհրդարանը Գերագույն դատարանին խնդրեց կարծիք հայտնել Զվեբեկի անջատման օրինականության վերաբերյալ: Կանադայի Գերագույն դատարանը տարբերակել է *ներքին ինքնորոշման իրավունքը և արտաքին ինքնորոշման իրավունքը*: Դատարանը առաջինը սահմանեց որպես «ժողովրդի ձգտումը իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը գոյություն ունեցող պետության շրջանակներում», իսկ երկրորդը, որը առաջանում է *«միայն ամենաձայրահեղ*

⁶⁵ International Court of Justice, “Accordance With International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo”, Advisory Opinion of 22 July 2010, <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>

⁶⁶ League of Nations Official Journal, Special Suppl. No. 3, at 5-10 (1920)

⁶⁷ The Aaland Islands Question: Report Submitted to the Council of the League of Nations by the Commission of Rapporteurs, LN Doc. B7/21/68/106 (1921)

⁶⁸ Supreme Court of Canada, Reference re Secession of Quebec, 20 August 1998, 2 S.C. Res. 217, <https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1643/index.do>

դեպքերում» և «պոտենցիալ ստանձնում» միակողմանի անջատման իրավունքի հաստատման մասին»: Դատարանը առաջարկել է, որ երբ ժողովրդի ներքին ինքնորոշման իրավունքը «ամբողջովին խաթարված է» մայր պետության կողմից, ապա ժողովուրդը կարող է ունենալ արտաքին ինքնորոշման իրավունք՝ անջատման միջոցով:

Հաջորդիվ Դատարանը ուշադիր վերլուծեց ինքնորոշման իրավունքը պետությունների տարածքային ամբողջականության ավելի լայն համատեքստում: Դատարանը որոշեց, որ ինքնորոշման ցանկացած իրավունքի իրացումը «պետք է բավականաչափ սահմանափակվի՝ կանխելու գոյություն ունեցող պետության տարածքային ամբողջականության, կամ ինքնիշխան պետությունների միջև հարաբերությունների կայունության սպառնալիքները», ապա եզրակացրեց, որ «ինքնորոշման իրավունքի առնչությամբ միջազգային իրավունքի ընդհանուր դրությունն այն է, որ իրավունքը գործում է «մայր» պետությունների տարածքային ամբողջականությանը տրված գերակա պաշտպանության շրջանակներում»: Այլ կերպ ասած՝ ինքնորոշման իրավունքը պետք է իրականացվի ներսում՝ պաշտպանելով գոյություն ունեցող մայր պետության տարածքային ամբողջականությունը, և միայն *ամենածայրահեղ հանգամանքներում և դեպքերում ժողովուրդը կարող է պահանջել արտաքին ինքնորոշման իրավունք*: Այսպիսով՝ Ալանդյան կղզիների գործով հանձնաժողովը և Կանադայի Գերագույն դատարանը համանման տեսակետներ էին պաշտպանում ներքին և արտաքին ինքնորոշման տարբերության վերաբերյալ՝ միաժամանակ օգտագործելով տարբեր տերմիններ: Կարող ենք արձանագրել, որ արտաքին ինքնորոշման իրավունք ժողովուրդը ունի, եթե ոտնահարվում են նրանց իրավունքները, ճնշվում կամ բռնությունների է ենթարկվում մայր պետության կողմից:

Կոսովոյի գործով դատավոր Յուսուֆը իր առանձին կարծիքի մեջ⁶⁹ նշել է՝ եթե պետությունը ոչ միայն մերժում է ինքնորոշման ներքին իրավունքի իրացումը, այլև նրանց *ենթարկում է խտրականության, հալածանքի և մարդու իրավունքների, կամ մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումների*, ապա նման բացառիկ հանգամանքներում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կարող է աջակցել առանձին պետականության պահանջին: Այն համապատասխանում է միջազգային իրավունքով սահմանված պայմաններին՝ հաշվի առնելով պատմական համատեքստը: Իսկ դատավոր Տրինադին իր առանձին կարծիքում պնդում է, որ «ինքնորոշման սկզբունքը վերապրել է ապագադոլթացում՝ մեր օրերում ժողովուրդների սիստեմատիկ ճնշման նոր ու դաժան դրսևորումներին դիմակայելու համար»⁷⁰: Նրա կարծիքով՝ Եսկան չէ, որ ինքնորոշմանը տրվում են տարբեր որակումներ, օրինակ՝ «ուղղիչ»: Նա այնուհետև պնդում է, որ *ոչ մի պետություն չի կարող դիմել տարածքային ամբողջականության կամ պետական ինքնիշխանությանը՝ վայրագություններ գործելու համար*: Լայնորեն պնդելով, որ հոլանդիստական փաստարկը առանցքային դեր է խաղում միջազգային իրավական կարգում, նա եզրակացրեց, որ «մարդու իրավունքների լուրջ և համակարգված խախտումների մեջ գտնվող պետության կառավարությունը դադարում է ներկայացնել տուժված մարդկանց, կամ բնակչությանը»: Հետևաբար, տուժված մարդիկ իրավունք ունեն ինքնորոշվել, որը կարող է իրականացվել՝ խախտելով պետության տարածքային ամբողջականությունը, այսինքն՝ անջատման տեսքով:

⁶⁹ Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo (Request for Advisory Opinion) (Separate Opinion of Judge Yusuf) [2010] ICGJ 423, <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-09-EN.pdf>

⁷⁰ Separate Opinion of Judge Cançado Trindade, <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-08-EN.pdf>, պարագրաֆ 175, 180

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործով արձանագրեց⁷¹, որ անջատման միջոցով ինքնորոշման իրավունքը հասանելի կլինի այն դեպքում, երբ «մարդու իրավունքները հետևողականորեն և կոպտորեն խախտվում են, կամ եթե դրանք ընդհանրապես ներկայացված չեն, կամ մասսայականորեն ներկայացված են ոչ ժողովրդավարական և խտրական պայմաններում»:

Հօգուտ անջատման իրավունքի՝ փաստարկ են բերել իրավաբաններ Ռինգերտն ու Գրիֆիոեն⁷². «Իսկ եթե պետությունը համառորեն մերժի ժողովրդի ներքին ինքնորոշման հիմնարար իրավունքը, եթե ժողովուրդը չունենա ընտրության ազատություն, այլ ենթարկվի բռնաճնշումների և տառապի մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումներից, և սպառված լինեն հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր հնարավոր միջոցները, այս ժողովրդական միջոցը չպե՞տք է «օգնի» արտաքին ինքնորոշման տեսքով»:

Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ը լուծարվեց 1991թ. հոկտեմբերի 26-ին ԱՀ ԳԽ «ԼՂԻՄ լուծարման մասին» օրենքով, որը հակասում էր ԽՍՀՄ Սահմանադրության 86-րդ հոդվածին⁷³, որով ինքնավար մարզի վերաբերյալ օրենքն ընդունվում էր միութենական հանրապետության ԳԽ կողմից՝ ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների ներկայացմամբ: Ադրբեջանի կողմից այս որոշմամբ ևս հաստատվեց այն փաստը, որ Ադրբեջանը ԼՂ-ի հայ բնակչության ներքին ինքնորոշման իրավունքը չի հարգել:

«Remedial secession» (անջատում հանուն փրկության) կոնցեպտն առաջին անգամ կիրառվել է Կոսովոյի անկախության ժամանակ՝ միջազգային դատարանի կողմից ճանաչվելով լեգիտիմ: Այս դոկտրինի էությունն այն է, որ եթե ազգային փոքրամասնության գոյությունը վտանգված է մայր պետության կազմում, ապա որպես նրա փրկության միակ ելք մնում է նրա անջատումը տվյալ պետությունից: Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆերանսի 1993 թվականի Վիեննայի հռչակագիրը կրկնում է, որ ինքնորոշման իրավունքը չի թուլատրում խաթարել այն պետությունների տարածքը, որոնք գործում են հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքների համաձայն⁷⁴: Այս հռչակագիրը, Բարեկամական հարաբերությունների հռչակագրի հետ մեկտեղ, կարող է մեկնաբանվել որպես արտաքին ինքնորոշման և հետևաբար, անջատման թուլտվություն, այն դեպքերում, երբ մայր պետությունը չի հարգում հավասար իրավունքները և ինքնորոշումը:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն ու Ռասսայական խտրականության վերացման կոմիտեն ևս վկայակոչել են անջատումը՝ որպես *հետևողականորեն չարաշահված խմբի պաշտպանության վերջնական միջոց*⁷⁵:

⁷¹ European Court of Human Rights, Case of Loizidou v. Turkey, Application no. 15318/89, 1996, <https://www.asylumlawdatabase.eu/sites/default/files/aldfiles/Loizidou%20v%20Turkey.pdf>

⁷² Ryngaert and Griffioen. "The relevance of the right to self-determination in the Kosovo matter: In partial response to Agora papers", 2009, para. 6

⁷³ Конституция (Основной Закон) Союза Советских Социалистических Республик, Принята на внеочередной седьмой сессии Верховного Совета СССР девятого созыва 7 октября 1977 г., статья 86

⁷⁴ Vienna Declaration and Programme of Action, 'World Conference on Human Rights, UN Doc. A/CONF.157/23 (1993), para. 2 (Vienna Declaration). It should be noted that the Vienna Declaration, unlike the Friendly Relations Declaration, did not limit the list of prohibited distinctions to those based on "race, creed or color", thereby implying that distinctions based on other grounds, such as religion, ethnicity, language, etc., may also trigger the right to external self-determination.

⁷⁵ Commission on Human Rights: Sub-commission on Prevention and Protection of Minorities, Protection of Minorities: Possible Ways and Means of Facilitating the Peaceful and Constructive Solution of Problems Involving Minorities, UN Doc. I/CN4/Sub.2/1993/34 (1993), para. 84; Report of the Committee on the Elimination of Racial Discrimination, G(AOR, 51st Sess., Suppl. No. 18 125126, para. 11, UN Doc. A/51/18 (1996)

Որոշ գիտնականներ ընդունել են այն փաստարկը, որ անջատումը կարող է ընդունվել այն դեպքերում, երբ մայր պետության կողմից վտանգի տակ է դրվում որոշակի խմբի կամ մարդկանց գոյատևման հիմնարար իրավունքը: Թոմաս Բուրին պնդում է, որ անջատման իրավունքը կարող է գոյություն ունենալ միջազգային իրավունքում ժողովրդի դեմ մարդու իրավունքների զանգվածային խախտումների ամենածայրահեղ դեպքերում⁷⁶: Նա եզրակացրել է, որ մարդու իրավունքների զանգվածային և համատարած ոտնահարման դեպքում մայր պետությունը պետք է ենթարկվի «վերջնական պատժի՝ տարածքի մի մասի նկատմամբ ինքնիշխանության կորստին»: Ըստ Ստեֆան Օթերի⁷⁷, եթե պետությունն ամբողջությամբ արգելափակում է ցանկացած «ներքին ինքնորոշում», քայքայում է ինքնավարության գոյություն ունեցող պայմանավորվածությունները և հետագայում օգնության է դիմում բռնաճնշումների ու դաժան ձևերին, որոնք ավարտվում են մարդկության դեմ հանցագործությունների, «Էթնիկ զտումների» ձևերով ցեղասպանության, «անջատման իրավունքը» որպես արտակարգ գործիք կիրառելի է:

Հայաստանում վերոնշյալ կոնցեպտը կիրառության մեջ էր դրել դեռևս 2016թ.-ից Լևոն Տեր-Պետրոսյանը իր հոդվածում⁷⁸ նշելով, որ «կարգավորման գործընթացում հաջողության հասնելու համար, բացի Մադրիդյան սկզբունքներում ամրագրված ինքնորոշման հանրաքվեի գաղափարի հետապնդումից, հայկական դիվանագիտությունը պարտավոր է օգտագործել նաև Լեռնային Ղարաբաղի անկախության անհրաժեշտության հիմնավորման չափազանց կարևոր մի այլ սկզբունք: Խոսքը վերաբերում է միջազգային իրավունքի բնագավառում վերջին տասնամյակների ընթացքում ակտիվորեն մշակվող, այսպես կոչված, «անջատում հանուն փրկության» (*remedial secession*) դոկտրինին: Նա նաև շեշտել է, որ այս սկզբունքը ժամանակին օգտագործվել է հայկական դիվանագիտության կողմից, մասնավորապես՝ դեռևս ԵԱՀԿ 1996 թվականի Լիսաբոնյան գագաթնաժողովում ունեցած իր ելույթում⁷⁹: Թեև այդ ելույթում Տեր-Պետրոսյանը չի կիրառում «անջատում հանուն փրկության» սկզբունքը, սակայն նրա ելույթն այն մասին էր, որ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի բնակչության նկատմամբ մշտապես կախված կլինի տեղահանման վտանգ, և որ Բաքվի, Սումգայիթի և Արցախի 24 գյուղերի նկատմամբ իրագործված գործողությունները վկայում են այն մասին, որ հայկական կողմի համար միակ ընդունելի լուծումը Ադրբեջանի կազմից դուրս ինքնորոշումն է: Հարկ ենք համարում ընդգծել, որ անհրաժեշտ է այս դոկտրինը զարգացնել ու աշխատանքներ տանել միջազգային հարթակներում՝ որպես բանակցային գործընթացի հիմք:

Արդյո՞ք Կոսովոյի նախադեպը հաստատում է, որ գոյություն ունի մայր պետությունից անջատման իրավունք, և եթե այո, ապա այդ իրավունքը կարո՞ղ է վերաբերել նաև Լեռնային Ղարաբաղի ժողովրդին: Այս հարցերին պատասխանելիս պետք է հաշվի առնենք ԼՂ-ի հակամարտության առանձնահատկությունները: Կոսովոյի նախադեպը միանշանակ արտացոլում է անջատման դոկտրինի էությունը, և սրա կիրառելիությունը ԼՂ-ի դեպքում կարելի է հիբրիդային եղանակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոսովոյի նախադեպը *siu generis* է (սա պայմանավորված է նրանով, որ այն համարվում է «ծանր գործ» և կարող է վտանգավոր նախադեպ լինել՝ այլ պետություններում

⁷⁶ **Thomas Burri**, *Secession in the CIS: Causes, Consequences, and Emerging Principles*, in: Walter Tal. (note 1), 145

⁷⁷ **Stefan Oeter**, *The Kosovo Case – An Unfortunate Precedent*, P. 62, https://www.zaoerv.de/75_2015/75_2015_1_a_51_74.pdf

⁷⁸ Լևոն Տեր-Պետրոսյան, «Ղարաբաղի անկախության ճանաչման հարցի շուրջ», 2016թ., <http://www.aniarc.am/2020/05/02/levon-ter-petrosyan-nk-recognize-or-not-article-may-6/>

⁷⁹ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը 1996թ.-ին Լիսաբոնյան գագաթնաժողովում, <https://www.youtube.com/watch?v=PjK1Duh2N9o&t=43s>

անջատողական նկրտումներ ու ձգտումներ ստեղծելու ու խթանելու գործում), այսինքն յուրահատուկ, չնայած այն հանգամանքին, որ ՄԱԿ-ի դատարանի նախադեպերը որպես օժանդակ միջոց՝ իրավական նորմերը սահմանելու համար իրավունքի աղբյուր են հանդիսանում⁸⁰: Այն պնդումը, որը առաջ է քաշում Ադրբեյջանը՝ տարածքային ամբողջականության հարցը բարձրաձայնելով, արդեն իսկ ի չիք է դառնում Կոստվոյի նախադեպի հիման վրա, բացի այդ՝ Ադրբեյջանը ընդունելով Մադրիդյան սկզբունքները և հանրաքվեի անցկացումը, իսկ հետագայում արդեն դրա մերժումը՝ անհիմն փաստարկներ անելով՝ խախտել է իր միջազգային պարտավորությունները, որը նա անում է մինչ օրս՝ ամբողջ մեղքը բարդելով Հայաստանի վրա:

Ադրբեյջանի կողմից պետական մակարդակով համակարգված իրականացվում է հայատյացության⁸¹, հայերի նկատմամբ էթնիկ զտումների քաղաքականություն⁸²: Խոսքը ոչ միայն ֆիզիկական դաժանությունների, այլ նաև հոգեկան տառապանքների ու տանջանքների մասին է: Դրա վառ օրինակներից են 1988թ.-ին Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ու Ադրբեյջանի այլ բնակավայրերում իրականացված ջարդերը, ինչպես նաև դեռևս 90-ական թվականներին իրականացված «Օղակ» գործողությունը: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի հայ ազգաբնակչության նկատմամբ 1991 թվականի ապրիլից մինչև օգոստոս ամիսը ԽՍՀՄ զինված ուժերի բանակային ստորաբաժանումների, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի ստորաբաժանումների և Խորհրդային Ադրբեյջանի նորաստեղծ Միլիցիայի հատուկ նշանակության ուժերի (ՕՄՈՆ) կողմից իրականացվել են պատժիչ-ահաբեկչական գործողություններ ու էթնիկ զտումներ: Դրա հետևանքով ամբողջությամբ հայաթափվել են Գետաշենն ու Շահումյանը:

Ատելության սերմանումը Ադրբեյջանում իրականացվում է նախադպրոցական տարիքից, որն ուղեկցվում է հայերի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելով: Բացի այդ՝ Ադրբեյջանի կողմից սանձազերծված սադրանքներն ու պատերազմները (ապրիլյան քառօրյա⁸³, 2020թ.-ի պատերազմ), որոնք ուղեկցվում են հայերի ահաբեկումով (բնականոն կյանքի խաթարում, հոլանդիտար խնդիրների առաջացում, օրինակ՝ գազատարի վնասումը, գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող քաղաքացիական անձանց ուղղությամբ արձակված թիրախային կրակոցները և այլն), բռնություններով, խոշտանգումներով, մարդկության դեմ ուղղված ու պատերազմական հանցագործություններով⁸⁴ ևս հիմք են հանդիսանում Արցախի՝ Ադրբեյջանի կազմում լինելու անհնարինության համար: Ադրբեյջանի կառավարության ծայրահեղ ատելությունը և ռազմատենչ հռետորաբանությունը, հայկական հուշարձանների պղծումը, ոչնչացումն ու մշակութային ժառանգության յուրացումը⁸⁵, ադրբեյջանական զինված ուժերի առանձնակի դաժանությունը բնորոշ են ցեղասպանական գործողությունների: Էթնիկ զտումների քաղաքականությունը իր վերջնական նպատակին կհասնի, եթե

⁸⁰ Статут Международного суда ООН, статья 38

⁸¹ Interim public report armenophobia in Azerbaijan organized hate speech animosity towards armenians <https://artsakhombuds.am/hy/document/570>

⁸² AD HOC Public report organized hate speech and animosity towards ethnic armenians in Azerbaijan as root causes of ethnically based torture and inhuman treatment by azerbaijani armed forces, <https://artsakhombuds.am/hy/document/780>

⁸³ Second interim report on atrocities committed by Azerbaijan during the 2016 april war, <https://artsakhombuds.am/hy/document/568>

⁸⁴ General report the damages to life, dignity, health, vital needs and property of the people of Artsakh, use of banned means and methods, <https://artsakhombuds.am/hy/general-report>

⁸⁵ AD HOC Public report the armenian cultural heritage in Artsakh (Nagorno-Karabakh): Cases of vandalism and at risk of destruction by Azerbaijan, <https://artsakhombuds.am/hy/document/792>

ադրբեջանական կողմի հանցագործությունները մնան անհասցե և պաշտոնական Բաքվի վրա արդյունավետ ճնշում չգործադրվի: Ադրբեջանի կազմում արցախահայությունը զոյաբանական սպառնալիքի առջև է կանգնած:

Հարկ է անդրադառնալ նաև 2022թ.-ի հոկտեմբերի 30-ին Արցախում կազմակերպված հանրահավաքին, որին մասնակցել են շուրջ 50.000 քաղաքացի⁸⁶: Հանրահավաքի միջոցով արցախահայությունը ևս մեկ անգամ ի լուր աշխարհի հայտնեց իր վճռականությունը՝ պայքարելու իր անկախության համար՝ շեշտելով, որ անընդունելի է ցանկացած փաստաթուղթ, որտեղ Արցախը կարող է դիտարկվել որպես Ադրբեջանի մաս:

2022թ.-ի դեկտեմբերի 12-ին Արցախի Հանրապետությունը Հայաստանի և արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը փակվել է ադրբեջանցի կեղծ բնապահպանների կողմից՝ թողնելով Արցախը դե-ֆակտո շրջափակման մեջ⁸⁷: Հավաքների ազատությունն Ադրբեջանում ազատ իրացվող իրավունք չէ, այն որ իշխանություններն արագ ցրում են բողոքի ինքնաբուխ ցույցերը՝ հաստատվել է Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպության⁸⁸, ինչպես նաև Freedom House-ի կողմից, և ակցիայի (այն էլ բնապահպանական) կազմակերպումը կասկածի տակ է դնում վերջինիս իսկությունը: Ճանապարհի փակման հետևանքով 120.000 մարդ հայտնվել է լիակատար շրջափակման մեջ: Բացի այդ, ձմռան ցուրտ պայմաններում 1100 մարդ, այդ թվում՝ տարեցներ, կանայք և 270 երեխաներ մնացել են ճանապարհին: Լաչինի միջանցքով ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդների տեղափոխումը և Հայաստանի մասնագիտացված բժշկական կենտրոններում հոսպիտալացումը դարձել է անհնար: Բացի այդ ամբողջությամբ դադարեցված է սննդի, բժշկական իրերի և էներգակիրների մատակարարումն Արցախ: Հայաստանից օրական Արցախ էր ներկրվում շուրջ 400 տոննա առաջին անհրաժեշտության ապրանքներ, այդ թվում՝ հացահատիկ, ալյուր, բանջարեղեն, միրգ, տնտեսական ապրանքներ և այլն⁸⁹: 2022 թվականի դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի իշխանությունները կտրել են դեպի Արցախ բնական գազի մատակարարումը՝ ձմեռային ծանր պայմաններում՝ զրկելով Արցախի խաղաղ բնակչությանը ջեռուցումից, տաք ջրից: Արդյունքում Արցախի բուժհաստատությունները չեն կարողանում ապահովել առաջնային բժշկական օգնություն, ուսումնական գործընթացն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետական մարմինների ու գերատեսչությունների աշխատանքը խաթարվել է և այլն:

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության համաձայն մարդկության դեմ ուղղված հանցագործություն է այնպիսի կենսապայմանների միտումնավոր ստեղծումը, ի թիվս այլոց՝ սննդի և դեղորայքի հասանելիությունից զրկում, որը հաշվարկվում է բնակչության մի մասի ոչնչացման համար, երբ կատարվել է որպես համատարած կամ

⁸⁶ Արտակ Բեգլարյանի ֆեյսբուքյան գրառում, https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02UfNXVnPFvjWPYucrToHqPSKxYGeAHXfpNK8WRPCaaJFashMbvCcX29AmF8BbEEXol&id=100000847389707&mibextid=Nif5oz

⁸⁷BBC, «Азербайджанские "активисты" блокируют дорогу из Карабаха в Армению. Одновременно в Карабахе пропал газ» [Azerbaijani "activists" are blocking the road from Karabakh to Armenia. At the same time, gas disappeared in Karabakh], <https://www.bbc.com/russian/news-63975080>

⁸⁸ Human Rights Watch (2019-12-10), «Azerbaijan: Events of 2019», <https://www.hrw.org/world-report/2020/country-chapters/azerbaijan>

⁸⁹ Human rights defender of Armenia and human rights defender of Artsakh joint AD HOC Public report the humanitarian consequences of blocking the only road connecting Artsakh with Armenia and the world, Erevan, Stepanakert, December 15.12.2022, https://www.artsakhombuds.am/hy/ad_hoc_reports

համակարգված հարձակման մաս` ուղղված ցանկացած քաղաքացիական բնակչության դեմ` հարձակման մասին իմացությամբ⁹⁰:

Ավելի ուշ` դեկտեմբերի 14-ին, «Թաթոյան» հիմնադրամի կողմից բացահայտվել է այն, որ Արցախ-Հայաստան ճանապարհը փակած ադրբեջանական «բնապահական ակտիվիստ առաջնորդներն» ուղիղ ֆինանսավորվում են Ադրբեջանի կառավարությունից կամ իշխանությունների հետ առնչություն ունեցող կազմակերպություններից⁹¹: Փաստերով ներկայացված է, որ Էկոակտիվիստ ներկայացող անձանց կազմակերպությունները ֆինանսավորվում են Ադրբեջանի կառավարության կողմից, որոշ դեպքերում` Ադրբեջանի առաջին փոխնախագահ և առաջին տիկին Մեհրիբան Ալիևայի ղեկավարած Յեյլար Ալիևի Ֆոնդից: Արցախ-Հայաստան ճանապարհը փակած ադրբեջանական «բնապահական ակտիվիստ առաջնորդներն» իրենց սոցցանցերի Էջերում առանձնահատուկ ջանասիրությամբ են տարածում Ալիևների ընտանիքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարները, անում են հակահայկական ու հայատյաց գրառումներ, քարոզ: ՀՀ և ԱՀ ՄԻՊ-երի համատեղ զեկուլցում փաստերով ներկայացված է, որ «Էկոակտիվիստների» մեջ կան ադրբեջանական հատուկ ծառայության զինծառայողներ⁹²: Այս ամենը հոլմանիտար ճգնաժամ է առաջացրել Արցախում և շարունակվելով ավելի ծանր հետևանքների է հանգեցնում: Ակնհայտ է, որ Ադրբեջանի կողմից նման գործողությունների դիմելը ունի այլ նպատակներ` վախի մթնոլորտ ստեղծելով հայաթափել Արցախը:

Մարդու իրավունքների պաշտպանների համատեղ զեկուլցը թարմացվել է⁹³, որտեղ ամփոփվել է ադրբեջանական հանրային խոսույթը և վերլուծվել են ադրբեջանցի պաշտոնատար անձանց հայտարարությունները, որի արդյունքներով հետևությունն այն է, որ ադրբեջանական քաղաքական ղեկավարությունը կառավարության պաշտոնական ու մերձպաշտոնական տեղեկատվական ու հանրային կարծիքի ձևավորման հիմնական միջոցներով և փորձված մեթոդների կիրառմամբ, դեռևս նույններ ամսից պատրաստել և ուղղորդել է հանրային կարծիքը Լաչինի հոլմանիտար միջանցքի արգելափակման համար:

Չեկուլցում թարմացվել են նաև նոր երևան եկած փաստեր կեղծ բնապահականական ակցիայի մասնակիցների վերաբերյալ, ներկայացվել է ստեղծված հոլմանիտար ճգնաժամի պայմաններում մարդու իրավունքների վիճակը: Ադրբեջանի կողմից նմանատիպ սադրանքներն ու ոտնձգումները ևս մեկ անգամ հաստատում են, որ Արցախը ունի անջատման իրավունք, անկախ պետականության ունենալու իրավունք:

Ադրբեջանական իշխանություններն ու հանրությունը մշտապես նշում էին, որ Ստեփանակերտում կազմակերպված հանրահավաքի մասնակիցները բերվել են Հայաստանից, և Արցախում այդքան մարդ չի ապրում: Այս թեզը հերքվեց այն ժամանակ, երբ շրջափակված Արցախում 2022թ.-ի դեկտեմբերի 25-ին կազմակերպվեց ևս մեկ

⁹⁰ Римский статут Международного уголовного суда, статья 7, [https://www.un.org/ru/law/icc/rome_statute\(r\).pdf](https://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf)

⁹¹ «Թաթոյան» հիմնադրամի ֆեյսբուքյան կայքէջ, https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02nYydXL8QNEngAB5nGvu41Ms9Nmu9KfBRtPeg2pfvLa4Zk81MoUe24xHf73Xu7MUbl&id=100085636795146&mibextid=Nif5oz

⁹² Human rights defender of Armenia and human rights defender of Artsakh joint AD HOC Public report the humanitarian consequences of blocking the only road connecting Artsakh with Armenia and the world, Erevan, Stepanakert, December 15.12.2022, https://www.artsakhombuds.am/hy/ad_hoc_reports

⁹³ Human rights defender of Armenia and human rights defender of Artsakh updated joint AD HOC Public report the humanitarian consequences of blocking the only road connecting Artsakh with Armenia and the world December 12-25, Erevan, Stepanakert, December 26.12.2022, <https://www.artsakhombuds.am/hy/document/980>

բազմահազարանոց հանրահավաք, որին մասնակցել են 60-70.000 քաղաքացիներ⁹⁴: Արցախում տեղի ունեցած երկու բազմահազարանոց հանրահավաքները վերահաստատել են այն փաստը, որ Արցախի ժողովուրդը վճռական է և տեր է կանգնելու իր ինքնորոշման իրավունքին, չի ընդունելու և հանդուրժելու որևէ կարգավիճակ Ադրբեյջանի կազմում, պայքարելու է իր անկախության համար:

2.4. Արցախի Հանրապետությունը համապատասխանում է Մոնտեվիդեոյի կոնվենցիայով սահմանված չափորոշիչներին

«Պետությունների իրավունքների ու պարտականությունների» մասին 1993թ. Մոնտեվիդեոյի կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է⁹⁵, որ պետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

1. մշտական բնակչություն,
2. սահմանված տարածք,
3. կառավարություն,
4. այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն:

Որպես միջազգային սովորույթային իրավունքի վերահաստատում, Մոնտեվիդեոյի կոնվենցիան ընդամենը համակարգել է գոյություն ունեցող իրավական նորմերը և դրա սկզբունքները⁹⁶: Հետևաբար դրանք կիրառվում են ոչ միայն ստորագրողների, այլ միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների նկատմամբ: Եվրամիությունը, իր Բաղինտերի կոմիտեի հիմնական հայտարարության մեջ եկել է այն եզրահանգման, որ պետությունների գոյությունը փաստացի հարց է, մինչդեռ այլ պետությունների կողմից ճանաչումը զուտ հռչակագրային է և ոչ թե պետականության որոշիչ գործոն⁹⁷: Հաշվի առնելով, որ Մոնտեվիդեոյի կոնվենցիայի 1-ին հոդվածը պարունակում է պետությունը՝ որպես այդպիսին բնութագրող հատկանիշների սպառիչ ցանկ, հարց է առաջանում՝ արդյոք պետության չորս չափանիշներից մեկի բացակայությունը հիմք է հանդիսանում դրա գոյությունը դադարելու համար: Այս հարցի պատասխանը կարելի է տալ միջազգային իրավական պրակտիկայի որոշ օրինակներով: Այսպիսով՝ պետությունը կարող է գոյություն ունենալ նույնիսկ հստակ սահմանված տարածքային սահմանների բացակայության դեպքում (օրինակ՝ Իսրայելը, որի տարածքային սահմանները չեն որոշվել 1948 թվականից): Պետք է նշենք, որ անկախ որևէ հանգամանքից տվյալ պետությունը փաստացի համարվում է գոյություն ունեցող: Բացի այդ՝ Մոնտեվիդեոյի կոնվենցիայի 3-րդ հոդվածը հստակ սահմանում է⁹⁸, որ պետության քաղաքական գոյությունը կախված չէ այլ պետությունների ճանաչումից: Նույնիսկ ճանաչումից առաջ պետությունն իրավունք ունի պաշտպանելու իր ամբողջականությունն ու անկախությունը՝ ապահովելու դրա պահպանումն ու բարգավաճումը և այլն: Արցախի

⁹⁴ Ստեփանակերտի հանրահավաքին 60-70 հազար մարդ է մասնակցել, <https://artsakhpres.am/arm/news/174859/stepanakerti-hanrahavaqin-60-70-hazar-mard-e-masnakcel-artak-beglaryan.html?fbclid=IwAR33fhCcmBhOchMCGIvDqhbBdJsy6nj08t767PbqwgNOZflCuMNXWjeyULU>

⁹⁵ Montevideo Convention on the Rights and Duties of States, <https://www.ilsa.org/Jessup/Jessup15/Montevideo%20Convention.pdf>

⁹⁶ Harris, D.J. (ed) 2004 "Cases and Materials on International Law" 6th Ed. at p. 99. Sweet and Maxwell, London

⁹⁷ The Opinions of the Badinter Arbitration Committee: A Second Breath for the Self-Determination of Peoples, <https://web.archive.org/web/20080227044914/http://www.ejil.org/journal/Vol3/No1/art12-13.pdf>

⁹⁸ Montevideo Convention on the Rights and Duties of States, <https://www.ilsa.org/Jessup/Jessup15/Montevideo%20Convention.pdf>

Հանրապետությունն ունի մշտական բնակչություն, ինչպես նաև սահմանված տարածք, որի սահմաններում էլ տարածվում է նրա իրավագորությունը: Կարող ենք փաստել, որ Արցախում կառավարությունը լիարժեք գործել է երկրի ողջ տարածքում և շարունակում է գործել հետպատերազմյան շրջանում՝ չօկուպացված մյուս տարածքներում:

Գոյություն ունեն պետությունների ու կառավարությունների ճանաչման երկու պաշտոնական ձևեր՝ դե-յուրե և դե-ֆակտո⁹⁹: Այս երկուսի միջև տարբերություն կայանում է նրանում, որ դե-ֆակտո ճանաչման դեպքում իրավական հետևանքների ծավալն ավելի փոքր է: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը համարվում է դե-յուրե ճանաչում, որն իր հերթին լրիվ է և վերջնական: Արցախի Հանրապետությունը համարվում է դե-ֆակտո ճանաչված պետություն, քանի որ նա հռչակել է իր անկախությունը՝ հանրաքվեի միջոցով, փաստացի գոյություն ունի արդեն երեք տասնամյակից ավելի: Դե-ֆակտո ճանաչված լինելը ճանաչման գործընթացի սկզբնական փուլն է, որից հետո արդեն պետությունը ձգտում է հասնել միջազգային ճանաչմանը: Մոնտեվիդեոյի կոնվենցիայով սահմանված չափանիշներից Արցախի միակ բացը այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատումն է, որը պայմանավորված է Արցախի ՄԱԿ անդամ պետություն չհանդիսանալով, և պետությունները խուսափում են դա անել, քանի որ Արցախը դե-յուրե ճանաչված պետություն չէ: Բայցևայնպես, պետք է նշենք, որ Արցախը դիվանագիտական հարաբերություններ ունի մասամբ ճանաչված պետությունների հետ ինչպիսիք են՝ Հարավային Օսիան, Մերձդնեստրը, Աբխազիան և այլն¹⁰⁰: Արցախը ունի մշտական ներկայացուցչություններ՝ ՀՀ-ում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրալիայում, Մերձավոր Արևելքի երկրներում, որը գտնվում է Լիբանանում: Փաստորեն, միայն վերջին չափանիշին չի համապատասխանում Արցախը, որը լուծելի խնդիր է՝ կարգավիճակի հարցի լուծումից անմիջապես հետո: Արցախը դե-ֆակտո կայացած ժողովրդավարական պետություն է, այն էլ ադրբեջանաթուրքական տանդեմին դիմակայելու և շրջափակման մեջ գտնվելու պայմաններում: Արցախի՝ որպես կայացած պետություն լինելու համար անհրաժեշտ է նաև միջազգայնորեն ճանաչված լինելը, քանի որ դրա միջոցով նա կկարողանա քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում հարաբերություններ հաստատել մյուս պետությունների հետ: Հատկանշական է, որ ժողովրդավարության զարգացումը Արցախում իրականացվում էր առանց միջազգային կառույցների ներկայության ու օժանդակության, որը ևս կարևոր երաշխիք է համարվում: Միջազգայնորեն ճանաչման հասնելը ժամանակի հարց է, որի համար պետք է ակտիվորեն աշխատել տարբեր ուղղություններով՝ փորձելով ներգրավել դրանում այլ պետությունների:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ադրբեջանը դեռևս ԽՍՀՄ-ն ժամանակաշրջանից հրաժարվել էր Արցախից, իսկ մինչև ԽՍՀՄ կազմում լինելը՝ Արցախը համարվում էր վիճելի տարածք Հայաստանի ու Ադրբեջանի միջև, այլ ոչ թե Ադրբեջանի մաս: Բացի այդ Արցախը 1990-ականներին իրացրել էր իր ինքնորոշման իրավունքը՝ ԽՍՀՄ օրենքներին ու միջազգային իրավունքին համահունչ: Արցախը հռչակել է իր անկախությունը այն տարածքներում, որոնք չեն պատկանել Ադրբեջանին: Արցախը որևէ առնչություն չունի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ: Տարածքային ամբողջականությունը ու ինքնորոշման

⁹⁹ Վիզեն Քոչարյան, Միջազգային իրավունք, Երևան 2002թ., էջ 73-74

¹⁰⁰ Վիդեա Պետրոսյան, Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, 2017թ., էջ 45-46

իրավունքը չեն հակասում միմյանց, ավելին՝ տարածքային ամբողջականությունը սահմանափակվում է միջպետական հարաբերությունների շրջանակներում: Բացի այդ՝ Ադրբեջանը հրաժարվել էր ԱդրեսԱՅ իրավահաջորդությունից և դրանով իսկ կորցրել Արցախի նկատմամբ իր հավակնությունները, իսկ 1989թ. ԽՍՀՄ կողմից Լեռնային Ղարաբաղը դուրս էր բերվել Ադրբեջանի կազմից և դարձել էր ԽՍՀՄ առանձին միավոր: Հետևաբար ԽՍՀՄ կազմից Լեռնային Ղարաբաղը հանրաքվեի միջոցով՝ անկախություն հռչակելով դուրս էր եկել այնպես, ինչպես Ադրբեջանը: Ադրբեջանի կողմից անօրինական կերպով ԼՂԻՄ լուծարումը ընդգծում է այն փաստը, որ արցախահայության ներքին ինքնորոշումը նրա կողմից չէր հարգվում ու պահպանվում: Բացի այդ, Ադրբեջանի կողմից արցախահայության նկատմամբ դեռևս ԽՍՀՄ տարիներից սկսված ու մինչ օրս շարունակվող հայատյացությունը, բռնությունները, ոտնձգություններն ու իրավունքների խախտումները **բացառում են Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեջանի կազմում:**

Ընդհանրացնելով ուսումնասիրություններն ու վերլուծությունները՝ կարող ենք առաջարկել հետևալ կետերը, որոնք առանցքային ու կարևոր են բանակցային գործընթացի և հիմնախնդրի լուծման համար.

1. Հակամարտության լուծման համար պետք է հաշվի առնել 2020թ.-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմն ու դրա արդյունքում ստեղծված նոր իրողությունները, մասնավորապես, պատերազմի արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կորուստները՝ Հադրուբի շրջանի, Շուշիի, Շահումյանի շրջանի և այլ բնակավայրերի դեօկուպացիայի խնդիրը: Պետք է բանակցություններ վարել այդ բոլոր տարածքները Արցախի իրավագրության ներքո վերադարձնելու նպատակով:
2. Հայաստանի նախաձեռնությամբ և ԵԱՀԿ ջանքերով պետք է Արցախը բանակցությունների օբյեկտից վերածել սուբյեկտի, այսինքն Արցախը՝ ի դեմս իր ներկայացուցիչների պետք է վերադառնա բանակցությունների սեղանի շուրջ, քանի որ հենց Արցախի քաղաքական կարգավիճակի ու ճակատագրի վերաբերյալ հարցերն են քննարկվում: Այստեղ կարևոր է նաև այն, որ բանակցություններում Արցախի կարգավիճակի հարցը հետին պլան չմղվի և ինքնորոշման իրավունքի հետ մեկտեղ բերվի առաջնային գիծ: Ադրբեջանը դեռևս արցախյան առաջին պատերազմի ժամանակ էր ճանաչել Արցախը որպես հակամարտող կողմ: Բացի այդ ԵԱՀԿ-ն՝ որպես հակամարտության խաղաղ կարգավորման մեջ ներգրավված կազմակերպություն, պետք է վերսկսի Արցախի հետ ուղիղ կապ պահել՝ այցերի ու շփումների միջոցով, ինչպես նաև մեխանիզմ մշակի Արցախի կայուն զարգացման համար՝ ելնելով մարդու իրավունքների պաշտպանությունից:
3. Թեև պատերազմից հետո շատ բարդ իրավիճակ է ստեղծվել, այսուամենայնիվ հիմնախնդրի լուծման համար նախադրյալներ կան: Հիմնախնդրի լուծումը երկարատև է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համակարգված ու միասնական աշխատանք բոլոր ուղղություններով: Հայաստանի Հանրապետության կողմից պետք է Արցախի ինքնորոշման իրավունքի հարցը բարձրացվի տարբեր ատյաններում, ներկայացվի Արցախի Հանրապետության կայացած ու ժողովրդավարական պետություն լինելու հանգամանքը:
4. Հմուտ և ճկուն քաղաքականություն վարել, ամբողջ գործիքակազմը օգտագործել՝ ՀՀ և ԱՀ շահերը բարձրացնելու և պաշտպանելու համար: Արցախի ինքնորոշման իրավունքը պաշտպանելու համար համագործակցել այն պետությունների հետ, որոնք դրա ջատագովներից են, օրինակ՝ վերջերս ՌԴ կողմից Դոնեցկի ու Լուգանսկի ճանաչումը(որը իրականացվել է անջատման

սկզբունքով), իսկ արևմտյան երկրների հետ՝ ինքնորոշման իրավունքը որպես ժողովրդավարական խտիտուտ ու մարդու իրավունքների և ազատությունների իրացման, ապահովման ու պաշտպանության համար կարևորագույն երաշխիք ներկայացնելով:

5. Արցախյան հիմնախնդրի լուծման փաթեթում նաև պետք է լինի Ադրբեջանի պատասխանատվության հարցը, դեռևս 1988-1994թթ., 2016թ.-ի ապրիլյան քառօրյայի, 2020թ.-ի սեպտեմբերի 27-ի լայնածավալ պատերազմի ժամանակ, ինչպես նաև դրանից հետո կատարված բոլոր հանցագործությունների համար: Այդ ամենը պետք է արժանանա միջազգային ատյանների համապատասխան պատշաճ գնահատականին ու դատապարտվի: Այս առումով Չայաստանը պետք է գործադրի կոնկրետ մեխանիզմներ, դիմի բոլոր միջազգային ատյաններին՝ պատասխանատվության հարցը բարձրացնելու համար, մասնավորապես, դիմի Միջազգային քրեական դատարան՝ որոշակի ժամանակով ճանաչելով դատարանի իրավագործությունը կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջոցով: Առաջին հերթին Ադրբեջանի իշխանություններին՝ ի դեմս երկրի նախագահի, բանակի ու այլ ստորաբաժանումների բարձրաստիճան պաշտոնյաների քրեական պատասխանատվության հարցը լուծելու համար: Անհրաժեշտ է աշխատել նաև հիբրիդային դատարանների՝ միջազգային մասնագիտացված քրեական տրիբունալ ստեղծելու համար՝ կոնկրետ Արցախում իրագործված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Պետք է աշխատել նաև Ադրբեջանի նկատմամբ սանկցիաների կիրառման համար բանաձևերի մշակման ու ընդունման ուղղությամբ:

6. Բանակցային գործընթացի համար կարևոր քայլ կլինի այն, որ Չայաստանը ՄԱԿ-ում նախաձեռնի բանաձևի ընդունում, ըստ որի ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը հայց կներկայացնի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան՝ խորհրդատվական կարծիք հայտնելու համար, թե արդյոք ԼՂ-ի 1991թ.- հանրաքվեն ու անկախության հռչակագիրը հակասում են միջազգային իրավունքին, թե ոչ:

7. Ադրբեջանի կողմից պետական մակարդակով էթնիկ զտումների ու հայատյացության, բռնության քաղաքականությունը, որը ակնհայտ ու միտումնավոր կերպով է արվում, ուժի կիրառման կամ դրա սպառնալիք հնչեցնելով՝ արցախյան հիմնախնդրի լուծված համարելը, արցախահայությանը իր քաղաքացիներ համարելը, նրանց որևէ ինքնավարության տալը բացառելը Ադրբեջանի կողմից փաստում է այն, որ Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեջանի կազմում կտանի նոր ցեղասպանության, սա ծայրահեղություն և արկածախնդրություն կլինի, որին չպետք է գնալ: Այս իսկ պատճառով բանակցային գործընթացի հիմքում Չայաստանը պետք է դնի **«անջատում հանուն փրկության»** սկզբունքը: ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում ընթացող Չայաստանն ընդդեմ Ադրբեջանի գործում պետք է համակարգված աշխատել ու ավելի շատ հիմնավոր փաստեր ներկայացնել, որպեսզի կարողանանք արցախահայության ու Ադրբեջանի *անհամատեղելիության* հանգամանքը ապացուցենք դատատարանի առաջ, քանի որ **Արցախի ինքնորոշման իրավունքի իրացումը առանց անկախ պետականության անհնար է, պետականությունը արցախահայության համար գոյաբանական գործոն է:**

Բայցևայնպես, պետք է նշենք, որ Արցախը իր ինքնորոշման իրավունքը արդեն իսկ իրացրել է, իսկ միջազգային ճանաչման հարցը ժամանակի խնդիր է, որը շատ դեպքերում պայմանավորված է աշխարհաքաղաքական ու պետական շահերով: Միայն միջազգային

ճանաչում ստանալու դեպում *Արցախը կկարողանա հանրաքվեի միջոցով վերամիավորվել մայր Հայաստանի հետ:*

Գրականության ցանկ

1. **Ալեքսանդր Մանասյան**, Արցախյան հիմնախնդիր: Նորովի իմաստավորման ենթակա հարցեր, 2019թ.
2. **Ալեքսանդր Մանասյան**, Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել..., Երևան 2011թ.
3. **Ալեքսանդր Մանասյան**, Ղարաբաղյան հիմնախնդիր(Փաստարկներ և փաստաթղթեր), 2005թ.
4. **Էդվարդ Նալբանդյան**, Լեռնային Ղարաբաղ. Տեսանելի՞ է ադրյոք կարգավորումը, Փարիզ 2015թ.
5. **Թաթուլ Հակոբյան**, Կարգավորման բանակցային գործընթաց, 2016թ.
<https://www.civilnet.am/news/167855/%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%A8/>
6. **Լևոն Տեր-Պետրոսյան**, «Ղարաբաղի անկախության ճանաչման հարցի շուրջ», 2016թ. <http://www.aniarc.am/2020/05/02/levon-ter-petrosyan-nk-recognize-or-not-article-may-6/>
7. **Լևոն Տեր-Պետրոսյան**, Պատեարագմ, թե՞ խաղաղություն. Լրջանալու պահը, 1997թ. <https://www.1in.am/2650577.html>
8. **Շահեն Ավագյան**, Լեռնային Ղարաբաղի իրավական ասպեկտներ, Երևան 2010թ.
9. **Շավարշ Քոչարյան**, Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Երևան 2015թ.
10. **Ստրաբոն**, Աշխարհագրություն,
<http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus%3Atext%3A1999.01.0198%3Abook%3D11%3Achapter%3D14%3Asection%3D1>
11. **Վարդան Օսկանյան**, Անկախության ճանապարհով. Փոքր երկրի մեծ մարտահրավերները, Երևան 2013թ.
12. **Վիգեն Քոչարյան**, Միջազգային իրավունք, Երևան 2002թ.
13. **Վիոլետտա Պետրոսյան**, Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, 2017թ.
14. «Азербайджан и Россия: общества и государства.» Москва 2001г.
15. «Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов, Ереван», 1992г.
16. Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. **В. А. Микаелян**, Ереван, 1992
17. **Татул Акопян**, Этапы карабахского конфликта в 1990-х и какими были попытки решения, Ереван 2016, <https://jam-news.net/ru/%D0%BC%D0%B8%D1%80%D0%B0-%D0%BD%D0%B5-%D0%B1%D1%83%D0%B4%D0%B5%D1%82-%D0%B2%D0%BE%D0%B9%D0%BD%D0%B0/>

18. Ю.Г. Барсегов, Нагорный Карабах в международном праве и мировой политике, Москва 2008г.
19. Ю.Г.Барсегов, Народ Нагорного Карабаха-субъект права на самоопределение, М., 1993г.
20. Dion Cassius, «Roman History», <https://ryanfb.github.io/loebolus-data/L177.pdf>
21. Rufat J. Efendiyev, Этно-демографическая эволюция населения Карабаха: этапы развития, 2021г.
22. Stefan Oeter, The Kosovo Case - An Unfortunate Precedent, https://www.zaoerv.de/75_2015/75_2015_1_a_51_74.pdf
23. Thomas Burri, Secession in the CIS: Causes, Consequences, and Emerging Principles, in: Walter "Ial. (note 1), 145
24. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն(1991թ. օգոստոս-1992թ. հունվար)»
25. «Խորհրդային Հայաստան», 3 դեկտեմբեր, 1989թ.
26. «Խորհրդային Հայաստան», Երևան, 1920 թ. հունիսի 19, «Բակինսկի ռաբոչի» Բաքու, հունիսի 22
27. «Կոմունիստ», Երևան, 1920 թ. դեկտեմբերի 7
28. «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 3 սեպտեմբերի 1991թ.
29. Ադրբեջանի ԱԳՆ Էլդար Մամեդյարով, <https://vestikavkaza.ru/amp/16878>
30. «Թաթոյան» հիմնադրամի ֆեյսբուքյան կայքէջ, https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02nYydXL8QNEngAB5nGvu41Ms9Nmu9KfBRtPeg2pfvLa4Zk81MoUe24xHf73Xu7MUbl&id=100085636795146&mibextid=Nif5oz
31. Արտակ Բեգլարյանի ֆեյսբուքյան գրառում, https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02UfNXVnPfvjWPYucrToHqPSKxYGeAHXfpNK8WRPCaaJFashMbvCcX29AmF8BbEEXol&id=100000847389707&mibextid=Nif5oz
32. ԳԼԼԱ-ի զրույցը Թաթով Հակոբյանի հետ, 2017թ., <https://www.aniarc.am/2017/03/31/gala-interview-tatul-hakobyan-territorial-swap/>
33. ԵԱՀԿ ԱՄՆ համանախագահ Մեթյու Բրայդայի հարցազրույցը, <https://www.azatutyun.am/a/1582680.html>
34. ԵԱՀԿ Համանախագահների առաջարկ, Կրակով 2018թ., <https://www.1in.am/2642543.html>
35. ԵԱՀԿ ռուս համանախագահ Իգոր Պոպով, <https://www.panorama.am/am/news/2013/12/18/igor-popov/383885>
36. ԵԱՀԿ Ռուսաստանի համանախագահի պատասխանը ՀՀ-ն հայտարարություններին, <https://armeniasputnik.am/20210113/rdn-chi-arajarkel-hhin-henc-aynpes-taracqner-tal-popov-herqel-e-pashinyani-hodvac-26086783.html>
37. Ընդհանուր պետության վերաբերյալ Ադրբեջանի նախագահի դիրքորոշումը, <http://www.aniarc.am/2020/02/05/tatul-hakobyan-book-chapter-in-eastern-armenian-on-common-state/>
38. Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը 1996թ.-ին Լիսաբոնյան գագաթնաժողովում, <https://www.youtube.com/watch?v=PjK1Duh2N9o&t=43s>
39. ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահություն, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագրի նախագիծ, 1997թ. Հունիս, https://docs.rferl.org/Infographics/2019/2019_04/2019_04_Armenian_Timeline/images/PDF/Package_solution1997.pdf
40. ԼՂ հարցի կարգավորման Փուլային տարբերակի նախագիծ, 1997թ., <http://www.aniarc.am/2022/08/06/step-by-step-1997-december-nkr/>
41. Կազանյան փաստաթուղթ, <http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/>

42. Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահություն, 10 նոյեմբեր, 1998թ., <http://www.aniarc.am/2022/08/06/common-state-1998-nk/>
43. ՀՀ առաջին նախագահի հարցազրույցը Կենտրոն հեռուստատալիքին, 2017թ., <https://www.youtube.com/watch?v=il6c0DHIJGs>
44. ՀՀ առաջին նախագահի հարցազրույցը Հ1 ալիքին, 2021թ. Մայիսի 27, <https://www.youtube.com/watch?v=6U72YbbqSxo>
45. ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի ելույթը 1996թ. ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնժողովում, <https://www.youtube.com/watch?v=PjK1Duh2N9o>
46. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան գրառում, <https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/2557201574600222/>
47. Մադրիդյան սկզբունքներ, <http://www.aniarc.am/2022/08/06/madrid-principals-armenian-text/>
48. Սերժ Սարգսյանի հարցազրույցը ԼՂ հիմնախնդրի բանակցային գործընթացի վերաբերյալ, <https://www.youtube.com/watch?v=1yyB-BIYTF4>
49. Ստեփանակերտի հանրահավաքին 60-70 հազար մարդ է մասնակցել, <https://artsakhpress.am/arm/news/174859/stepanakerti-hanrahavaqin-60-70-hazar-mard-e-masnakcel-artak-beglaryan.html?fbclid=IwAR33fhCcmBhOchMCGJvDqhbBdJsy6nj08t767PbqwgNOZf1CuMNXWjeyULU>
50. «Коммунист» (Баку), 2 декабря, 1920
51. BBC, [«Азербайджанские "активисты" блокируют дорогу из Карабаха в Армению. Одновременно в Карабахе пропал газ» \[Azerbaijani "activists" are blocking the road from Karabakh to Armenia. At the same time, gas disappeared in Karabakh\]](https://www.bbc.com/russian/news-63975080), <https://www.bbc.com/russian/news-63975080>
52. **Алиев И.**, Азербайджан пытаются заставить признать независимость Карабаха, <https://eadaily.com/ru/news/2016/10/07/aliev-azerbaydzhan-pytayutsya-zastavit-priznat-nezavisimostkarabaha>
53. Всесоюзная перепись населения 1989 года. Распределение городского и сельского населения областей республик СССР по полу и национальности, http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_89.php?reg=71
54. Закон СССР от 3 апреля 1990 г. № 1409-І «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР»
55. Заседание Международного дискуссионного клуба «Валдай», <http://kremlin.ru/events/president/news/69695>
56. Конституционный Акт Азербайджанской Республики от 18 октября 1991 года №222-ХІІ, О восстановлении государственной независимости Азербайджанской Республики
57. Конституция (Основной Закон) Союза Советских Социалистических Республик, Принята на внеочередной седьмой сессии Верховного Совета СССР девятого созыва 7 октября 1977 г., статья 86
58. Лиссабонский документ ОБСЕ 1996 года, <https://www.osce.org/files/f/documents/2/4/39543.pdf>
59. Полная версия интервью президента Армении Сержа Саргсяна Дмитрию Киселеву, <https://www.youtube.com/watch?v=PwSaiBK25EM>
60. Решение Пятого комитета Ассамблеи Лиги Наций от 20.11.1920 об отклонении просьбы Азербайджана о приеме в Лигу Наций в связи с наличием у него

территориальных споров (League of Nations. The Records of the First Assembly. Meetings of the Committees II. Geneva, 1920, p.173–174)

61. Римский статут Международного уголовного суда, статья 7,

[https://www.un.org/ru/law/icc/rome_statute\(r\).pdf](https://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf)

62. Статут Международного суда ООН

63. "Jus cogens | Definition of jus cogens in English by Oxford Dictionaries",

<https://web.archive.org/web/20110717135623/http://oxforddictionaries.com/definition/jus+cogens>

64. Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo (Request for Advisory Opinion) (Separate Opinion of Judge Yusuf) [2010] ICGJ 423, <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-09-EN.pdf>

65. AD HOC Public report organized hate speech and animosity towards ethnic armenians in Azerbaijan as root causes of ethnically based torture and inhuman treatment by azerbaijani armed forces, <https://artsakhombuds.am/hy/document/780>

66. AD HOC Public report the armenian cultural heritage in Artsakh (Nagorno-Karabakh): Cases of vandalism and at risk of destruction by Azerbaijan,

<https://artsakhombuds.am/hy/document/792>

67. Commission on Human Rights: Sub-commission on Prevention and Protection of Minorities, Protection of Minorities: Possible Ways and Means of Facilitating the Peaceful and Constructive Solution of Problems Involving Minorities, UN Doc. I/CN4/Sub.2/1993/34 (1993), para. 84

68. Definition of Aggression, United Nations General Assembly Resolution 3314 (XXIX),

<http://hrlibrary.umn.edu/instreet/GAres3314.html>

69. European Court of Human Rights, Case of Loizidou v. Turkey, Application no. 15318/89, 1996,

<https://www.asylumlawdatabase.eu/sites/default/files/aldfiles/Loizidou%20v%20Turkey.pdf>

70. General report the damages to life, dignity, health, vital needs and property of the people of Artsakh, use of banned means and methods, <https://artsakhombuds.am/hy/general-report>

71. **Harris, D.J.** (ed) 2004 "Cases and Materials on International Law" 6th Ed. at p. 99. Sweet and Maxwell, London

72. Human rights defender of Armenia and human rights defender of Artsakh joint AD HOC Public report the humanitarian consequences of blocking the only road connecting Artsakh with Armenia and the world, Erevan, Stepanakert, December 15.12.2022,

https://www.artsakhombuds.am/hy/ad_hoc_reports

73. Human rights defender of Armenia and human rights defender of Artsakh updated joint AD HOC Public report the humanitarian consequences of blocking the only road connecting Artsakh with Armenia and the world December 12-25, Erevan, Stepanakert, December 26.12.2022,

<https://www.artsakhombuds.am/hy/document/980>

74. Human Rights Watch (2019-12-10), «Azerbaijan: Events of 2019»,

<https://www.hrw.org/world-report/2020/country-chapters/azerbaijan>

75. Interim public report armenophobia in Azerbaijan organized hate speech animosity towards armenians <https://artsakhombuds.am/hy/document/570>

76. International Court of Justice, "Accordance With International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo", Advisory Opinion of 22 July 2010,

<https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>

77. International Covenant on Civil and Political Rights, International Covenant on Economic, Social and Cultural Rights, 16 December 1966, General Assembly resolution 2200A (XXI)
78. International crisis group, Digging out of Deadlock in Nagorno-Karabakh, REPORT 255 / EUROPE & CENTRAL ASIA 20 DECEMBER 2019, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/255-digging-out-deadlock-nagorno-karabakh>
79. League of Nations Official Journal, Special Suppl. No. 3, at 5-10 (1920)
80. Montevideo Convention on the Rights and Duties of States, <https://www.ilsa.org/Jessup/Jessup15/Montevideo%20Convention.pdf>
81. Organization for Security and Co-operation in Europe, Helsinki final act 1975, <https://www.osce.org/hy/mc/39507>
82. OSCE Minsk Group Co-Chairs issue statement on Nagorno-Karabakh, <https://www.osce.org/mg/49237>, 29 November 2007
83. President Wilson's Address to Congress, Analyzing German and Austrian Peace Utterances, <http://www.gwpda.org/1918/wilpeace.html>
84. Report of the Committee on the Elimination of Racial Discrimination, G(AOR, 51st Scss., Suppl. No. 18 125126, para. 11, UN Doc. A/51/18 (1996).
85. Ryngaert and Griffioen. "The relevance of the right to self-determination in the Kosovo matter: In partial response to Agora papers", 2009
86. Second interim report on atrocities committed by Azerbaijan during the 2016 april war, <https://artsakhombuds.am/hy/document/568>
87. Separate Opinion of Judge Cañado Trindade, <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-08-EN.pdf>
88. Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, 10 July, L'Aquila, <https://www.osce.org/mg/51152>
89. Supreme Court of Canada, Reference re Secession of Quebec, 20 August 1998, 2 S.C. Res. 217, <https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1643/index.do>
90. The Aaland Islands Question: Report Submitted to the Council of the League of Nations by the Commission of Rapporteurs, LN Doc. B7/21/68/106 (1921)
91. The Opinions of the Badinter Arbitration Committee: A Second Breath for the Self-Determination of Peoples, <https://web.archive.org/web/20080227044914/http://www.ejil.org/journal/Vol3/No1/art12-13.pdf>
92. United Nations General Assembly Resolution 1514, https://en.wikisource.org/wiki/United_Nations_General_Assembly_Resolution_1514
93. United Nations, Chapter I - Purposes and Principles of Charter of the United Nations
94. United Nations, International Court of Justice Archived 2017-02-22 at the Wayback Machine 2010 Kosovo Case, Separate Opinion of Judge A. A. Cañado Trindade
95. Vienna Declaration and Programme of Action, 'World Conference on Human Rights, UN Doc. A/CONF.157/23 (1993), para. 2 (Vienna Declaration):